




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0)** license.

Դու կարող ես.


սրահանել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը առերժեքում համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Дверь келес



9/47.925

1570

7-26 Դարձիւն Զ.

Բուշիւն և

Հայաստան

947-325

«ՍԵՒԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 3

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԲՕԼՇԵՒԻԶՄԸ
ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)



ԻԶՄԻՐ

Տպագրութիւն Քէշիշեան

1922

“ՍԵՒԱՆ,” ՀՐԱՏԱՐԱԿԶՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«Սեւան» հրատարակչական ընկերութիւնը շահակ-
ցական նուաճումներու հեռանկարին չի ձգտիր երթիք։

Մեր կեանքին հարկեցուցիչ պահանջներէն մին չը-
րացնելու մտածուի՝ մեր ծրագրին հիմնաքարը եղաւ։

«Սեւան» հրատարակչականը գրքի գրականութեան
մշակման կը ձգտի։ Այդ մեկնակէտը խնամուած ու ծա-
ւաղական աշխատութիւններով պիտի օժտէ մեր գրակա-
նութիւնը։

Գրական գեղարուեստական գործերէն զայս մեկն
չպիտի մոռնանք այս ցեղին բարոյական կորով ներշնչող
հրատարակչութիւններ սալ։

կրորդ գործը. Մատենաշար
այդ ուղղութեամբ մեր հե-
ւոյս մեկ օրինակն է։

Անը գրագէտներու հետ ու-
նարեւոյթ յետոյ պիտի ծա-
գործեան, որով մեզիպ
կան են։

Ակասողութեան
նկէջ մեր հասցեն

“Sévan,”
chi, Rue Imam No. 67
Smyrne

47.925
26
7-
329.14

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԲՕԼՇԵՒԻԶՄԸ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)



ԻԶՄԻՐ

Տպագրութիւն Բէշիշեան

1922



Է91

ՉԷՏԻ


82118
11
A

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

UNIVERSITY OF CHICAGO PRESS

1000 1113 109

110200301



1113
1113
1113

ԲՕԼՇԵԻԻԶՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Դժուար է երևակայել աւելի դաժան, աւելի դի-
ւային ծաղր՝ ուղղւած և՛ Հայաստանի, և՛ սօցիալիզ-
մի հասցէին, քան ախտաւոր մտայնութեամբ բռնւած
հայ մարդկանց ձգտումը այսօր եւ եթ, բռնի ոյժով
փորձ անել մտցնելու այս աւերակ ու դժբախտ երկ-
րում սօցիալիստական կարգեր:

Եթէ անտարակուսելի է, որ այդպիսի մարդկանց
շարքում կան ոճրագործ, բաղդախնդիր տարրեր, ո-
րոնք, «կարմիր», «յեղափոխական», «կօմմունիստա-
կան» ֆրազների տակ թագնւելով, հետապնդում են
իրենց անձնական մութ նպատակները, պղտոր ջրում
ձուկ են կամենում որսալ, — ապա, նոյնքան անտա-
րակուսելի է, որ կան նաեւ մոլորւած մարդիկ (և նը-
րանք անշուշտ մեծամասնութիւն են կազմում), ո-
րոնք իրենց շատ երիտամարդ հասակի, կարճատե-
սութեան, թեթեւամտութեան, տեմպերամենտի կամ
տգիտութեան պատճառով ի վիճակի չեն իրենց պարզ
հաշիւ տալու, թէ ի՞նչ են անում և ի՞նչ բանի են ի-
րօք ձգտում:

Ահա այդ մարդկանց է, որ ես ուղղում եմ իմ
խօսքը:

I

ՖՐԱԶՆԵՐՆ ՈՒ ՓԱՍՏԵՐԸ

Մարդկային պատմութեան մէջ հազիւ թէ գտնւի
մէկ ուրիշ քաղաքական կուսակցութիւն, որ այնքան
կարճ ժամանակում այնքան հիմնական կերպարանա-
փոխման ենթարկւէր, որքան ռուս բօլշևիկները: Այն,
ինչ որ դեռ երէկ սրբութիւն սրբոց էր նրանց հա-

մար, այսօր դառել է միայն «բուրժուական նախա-
պաշարմունք» և ծաղրի առարկայ։ Եւ, ինչ որ ամե-
նից աւելի զարմանալի է, ոչ ոք այդ բօլշևիկներից,
հրաժարւելով իր երէկ պաշտած դաւանանքներից,
որոնց համար նա այնքան մեծ կռիւ է մղել առաջ,
չի զգում խղճի որւէ խայթ, մտքի որւէ տարակու-
սանք, կամքի որւէ տատանում։ Կարծես մի ծանր
բեռ է որ դէն է չպրտւում...

Երբ բօլշևիկները ձգտում էին տակաւին իշխա-
նութեան, թերեւս ոչ-ոք նրանցից աւելի մեծ մոլե-
ռանդութեամբ եւ անվերապահութեամբ չէր պաշտ-
պանում խօսքի ու մամուլի ազատութիւնը, անձի և
բնակարանի անձեռնմխելիութիւնը, Տ-ժամեայ բան-
ւորական օրը, բանւորների ազատ կազմակերպման
իրաւունքը, նրանց անբռնադատ պայքարը իրենց ի-
րաւունքների ու շահերի պաշտպանութեան համար,
Սահմանադրական ժողովի գումարումը, ամենալայն
աւանդակարական սկզբունքների անմիջական ու ան-
պայման կիրառումը և այլն և այլն։

Երբ նոյն բօլշևիկները տիրացան իշխանութեան,
խեղդեցին մամուլն այնպէս, ինչպէս ոչ մի ժամանակ
չէր յանդգնել անելու նոյնիսկ ցարական ռեժիմը,
գրաւեցին բոլոր տպարանները, թղթի ամբողջ պա-
հեստը, փակեցին բոլոր թերթերը, բոլոր բերաննե-
րը, ցրեցին Սահմանադիր ժողովը, վերացրին բոլոր
սահմանադրական երաշխիքները ու ստեղծեցին մի
այնպիսի մահասարսուռ դրութիւն, երբ ոչ-ոք, բացի
բօլշևիկներից, վստահ չէր կարող լինել, որ իրան
չեն բռնի ու չեն գնդակահարի ամենաչնչին կասկածի
համար, ոչ-ոք վստահ չէր, որ առաւօտ փողոց դուրս
գալով պիտի վերադառնայ տուն կամ տանը՝ անկողին
մտնելով՝ առաւօտը պիտի գտնի իրան իր անկողնի
մէջ։ Եւ այսպէս գահավիժելով, ի վերջոյ սկսեցին

կրճատել նաև բանւորների իրաւունքները ու ոչ միայն վերացրին 8-ժամեայ բանւորական օրը, այլ և մտցրին 10-12 ժամեայ ստիպողական աշխատանքը:

Նրանք, որ լամենականատաղի հակառակորդներն էին պատերազմի ու միլիտարիզմի. նրանք, որ հրապարակ եկան անմիջապէս և ամեն գնով հաշտութիւն կնքելու և խաղաղութիւն հաստատելու խոստումով և դրանով իրենց կողմը գրաւեցին մոլորւած ու յոգնած ժողովրդական զանգւածները, ոչ միայն իրենց հետ չբերին խաղաղութիւն, այլ և առաջ բերին մի անհամեմատ աւելի աւերիչ ու մարդաջինջ պատերազմ, քան պատերազմն էր Դերմանիայի հետ: Ամբողջ երկիրը դարձրին մի պատերազմական բանակ, որին զոհեցին ամեն ինչ. քանի քանի միլիոններ մեռան բօլշևիկների յարուցած այդ դժբախտ ներքին պատերազմի ընթացքում գնդակից, սովից, հիւանդութիւններից... Եւ մինչ Եւրոպական բոլոր պատերազմող պետութիւնները արդէն վաղուց կնքել են հաշտութիւն և վայելում են խաղաղ կեանքի բարիքները, դժբախտ Ռուսաստանն իր խելայեղ ընթացքով չկարողացաւ տակաւին հանգիստ գտնել: Եւ այսօր էլ դեռ առատօրէն հոսում է նրա խեղճ զաւակների արիւնը ուղմի դաշտերում:

Որքան միամիտ ու կոյր են մեզանում այն մարդիկ, որոնք հաւատում են կամ կամենում են հաւատացնել ուրիշներին, թէ ռուս բօլշևիկները, որոնք գրեթէ հրեք տարւայ ընթացքում ի վիճակի չեղան իրենց հայրենի երկրին հաշտութիւն բերելու, պիտի ընդունակ լինեն աւելի լաւ տնօրինելու մեր հայրենիքի բախտը: Ողորմելիներ. նրանք չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ, որ բօլշևիկները կարող են միայն բոլոր ֆրօնտների վրայ աւելացնել մի նոր, բոլորից աւելի վտանգաւոր և արիւնալի ֆրօնտ—

Ներքին ֆրոնտ :

Երբ բոլշևիկները դեռ իշխանութեան գլուխ չէին կանգնած , անսպասելի աղմուկով և մոլեգնութեամբ կռոււմ էին գաղտնի դիպլոմատիայի և գաղտնի քաղաքականութեան դէմ : Բայց բաւական էր , որ նրանք տիրանային իշխանութեան , և ամեն ինչ հիմնովեր շրջւեց : Պարզւեց , որ գաղտնի դիպլոմատիան ու գաղտնի քաղաքականութիւնը ատելի են եղել բոլշևիկներին միայն այն պատճառով , որ ուրիշներն են վարել այդպիսի քաղաքականութիւն եւ դիւանագիտութիւն : Բայց երբ քաղաքականութեան և դիւանագիտութեան վարիչներն իրենք բոլշևիկները դառան , սկսեց գաղտնի դիպլոմատիայի և քաղաքականութեան մի այնպիսի շրջան , որի հետ կարող են մրցել միայն Երիտասարդ թիւրքերը քաղաքական պայքարի իրենց արեւելեան նեւք , դաժան ու դաւադրական մեղոտներով : Պրօվօկացիա , կաշառք , դաւ , սադրանք , գաղտնի ագիտացիա , գրգռում , կազմակերպումն հակապետական տարրերի՝ խռովութիւններ և ապստամբութիւններ առաջ բերելու համար օտար երկրներում — ահա այն զազրելի սխտեմը , որ ուսումնասիրելու ամբողջովին ժառանգեցին ցարական ռեժիմից և կատարելագործեցին մինչև վերջին աստիճան , օգտւելով Երիտասարդ թիւրքերի և գերման իւնկերների զարհուրելի փորձից : Բոլշևիկների Արեւելքում վարած մութ և քստմնելի քաղաքականութիւնը պերճախօս արտայայտութիւն է ասիական բռնակալներին յատուկ այդ տմարդի սխտեմի :

Նոյնը մենք տեսնում ենք բոլշևիկների վարած ներքին քաղաքականութեան մէջ : Նրանք , որ այնքան յամառօրէն , այնքան յախուռն կերպով և այնպիսի մեծ ցասումով կռոււմ էին ցարական «օխրանկայի» , գաղտնի ոստիկանութեան արիւնարբու դա-

հմների դէմ, ստեղծեցին պատմութեան մէջ աննա-
ընթաց մի այնպիսի դժոխային մեքենայ, կազմա-
կերպութիւն՝ «Ջրեզվիչայգան», որի առջև միանգա-
յայն նսեմացաւ հռչակաւոր ցարական «օխրանկան»
իկ :

Չափազանց բնորոշ է բօլշևիկներին համար նաև
նրանց վերաբերմունքը դէպի ազգային ինքնորոշման
սկզբունքը : Երբ դեռ իշխանութիւնը նրանց ձեռքում
չէր, նրանք չտեսնուած թափով ու անվերապահու-
թեամբ պաշտպանում էին ամեն մի ազգի բացարձակ
իրաւունքը իր կամեցած ձևով որոշելու իր բախտը :
Այդ պաշտպանութիւնը կրում էր այնպիսի մոլեգին
բնոյթ, որ ռուս ազգայնական տարրերը ամենայն ան-
կեղծութեամբ համարում էին բօլշևիկներին՝ հայրե-
նիքի, Ռուսաստանի թշնամիներ : Բայց, երբ իշխա-
նութիւնն անցաւ բօլշևիկներին ձեռքը, նրանք հետզ-
հետէ այդ հարցումն էլ երևան բերին իրենց իսկական
էութիւնը : Նրանք չկամեցան մի անգամ ընդմիջտ ճա-
նաչել ցարական Ռուսաստանի ճիրաններում տաս-
նեակ ու հարիւրաւոր տարիներ տանջւած փոքր ազ-
գերի անկախութիւնը և միանգամ ընդմիջտ հրաժար-
ւել նրանց ներքին գործերի մէջ խառնւելու վատթար
սովորութիւնից : Աւելին . գրեթէ երկու տարի բօլշե-
ւիկները ոչ մի միջոց չխնայեցին նորից իրենց իշխա-
նութեան ենթարկելու Ֆինլանդիան, Էստօնիան, Լատ-
ւիան, Լիտւան, Բելոռուսիան, Լեհաստանը, Ուկրայ-
նան, Վրաստանը և այլն : Անվերջ ինտրիգներ, դաւեր,
կաշառք, ներքին խռովութեանց և ապստամբութեանց
կազմակերպում— ահա միջոցներ, որոնց նրանք դի-
մեցին և դիմում են այսօր էլ, ներսից պայթեցնելու
այդ երկրների անկախ քաղաքական գոյութիւնը : Եւ
պատերազմ, պատերազմ ու պատերազմ ցարական ա-
նիծեալ լուծից նոր ազատւած փոքր ազգերի դէմ :

դրսից նւաճելու համար նրանց ամեն անգամ, երբ ներքին ինտրիգներն ու դաւերը չէին յաջողւում:

Այս բոլորը պարզ ցոյց է տալիս, որ յեղափոխութիւնը և յեղափոխական ֆրազէօլօգիան ոչինչ չէ փոխել իրօք ոուս բռնապետական ժողովրդի հոգումէջ:

Յարը գնաց, եկան ուրիշները նրա տեղ, բայց ոուս ժողովուրդը, նրա ոգին մնաց նոյնը: Եւ բնական է, որ շատ քիչ բան ըստ էութեան պիտի փոխւէր նրա կեանքում: Բռնի սյժով էր ստեղծել ոուս ազնւականութիւնն իր հսկայական Ռուսաստանը եւ բռնի սյժով էլ պահում էր նա իր հպատակութեան տակ իր բոլոր նւաճած օտար ազգերը: Ընկաւ ազնւականութիւնը. իշխանութիւնն անցաւ սօցիալական ուրիշ տարրերի և անհատների ձեռքը, բայց ոուս բռնապետական կամքն ու մտայնութիւնը մնաց նոյնը, որովհետեւ և՛ երէկւայ յետադիմական տէրերը, և՛ այս օրւայ «կարմիր» տէրերը միևնոյն ժողովրդի զաւակներն են: Ուստի այնքան դժւար է, ես պիտի ասէի, այնքան անկարելի՝ «կարմիրների» համար, ինչպէս և սևերի համար, հրաժարւել իրենց ազգային—քաղաքական յաւակնութիւններից եւ «պատմական իրաւունքներից»...

Ահա թէ ինչու բօլշևիկեան «կարմիր» Ռուսաստանն այնքան անվստահութիւն ու այնքան սարսափ է ներշնչում բոլորազատասէր ժողովուրդներին և առաջին հերթին՝ Յարական Ռուսաստանից պոկւած մանր ազգերին...

II

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԸ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ
ԷՈՒԹԻՒՆԸ

Ո՞րն էր այն սրբազան նպատակը, որին բոլշև-
ւիկները զոհեցին տարիներ շարունակ իրենց փայփա-
յած սկզբունքներն ու դաւանադրւելները: Ո՞րն է այն
գերագոյն գաղափարը, որի համար բոլշևիկները կա-
տարեցին այնքան սարսափելի բռնութիւններ, նւի-
րաբերեցին միլիոնաւոր մարդկային կեանքեր:

Այդ նպատակն ու գաղափարը համաշխարհային
սոցիալիստական յեղափոխութիւնն էր և սոցիալիս-
տական կարգերի անմիջական իրագործումը: Մի նը-
պատակ էր այս, որ ամեն մի իրատես մարդու հա-
մար սկզբից իսկ դատապարտւած էր վիժման: Որով-
հետև սկզբից իսկ պարզ պիտի լինէր, որ Ռուսաս-
տանի նման տնտեսապէս, սոցիալապէս և կուլտուրա-
պէս յետամնաց մի երկիր ոչ մէկ դէպքում չի կարող
լինել առաջապահ՝ սոցիալիստական յեղափոխութեան
համար: Մի գերազանցապէս գիւղացիական երկիր,
ուր տակաւին իշխում է նահապետական տնտեսու-
թիւնը, ուր կապիտալիզմը դեռ նոր էր սկսել թոյլ
նւաճումներ անել, ուր ազգաբնակչութեան մեծագոյն
մասը գիւղացիութիւնն է կազմում և ուր բանւորու-
թիւնը համեմատաբար այնքան ողորմելի քանակ է
ներկայացնում, ի՞նչպէս պիտի կարենար յանկարծ,
մոգական գաւազանի մի շարժումով, սոցիալիստական
երկիր դառնալ:

Մարքսիզմի ամենամեծ երախտիքներից մէկը
մարդկութեան՝ այն է, որ ազատեց նրան այն վտան-
գաւոր, կործանարար ցնորքից, թէ սոցիալիզմի իրա-
գործումը միանգամայն կախւած է տնտեսների կամ
նոյնիսկ մասսաների բարի կամեցողութիւնից:

կար ժամանակ, գրեթէ մի դար առաջ, երբ մարդ-
կութեան լաւագոյն զաւակներն անգամ այն միամիտ
հաւատն ունէին, թէ ամենայն հեշտութեամբ կարելի
է իրագործել սօցիալիզմը համոզելու ճանապարհով
(Օուէն, Սէն-Սիմոն) կամ բռնի միջոցներով (Բաբեոֆ,
Բլանկի): Բայց եկաւ գիտական սօցիալիզմը յանձին
Մարքս Էնգելսի ստեղծած հոյակապ սիստէմի և ան-
վիճելի կերպով ապացուցեց, որ սօցիալիզմի իրակա-
նացման համար ամենից առաջ պէտք են առարկայա-
կան (օբիեկտիւ) նախապայմաններ:

Ո՞րոնք են այդ առարկայական պայմանները:—
Կապիտալիզմի ծայր աստիճան զարգացումը, այնպի-
սի խոշոր կապիտալիստական տնտեսութեան գոյու-
թիւնը, որն իր մէջ պարփակում է ազգաբնակչութեան
խոշորագոյն մասը: Որովհետեւ առանց խոշոր կապի-
տալիստական տնտեսութեան՝ միանգամայն անիմաստ
ու աննպատակ է դառնում արտադրութեան միջոցնե-
րի սօցիալիզացիան. բացի այդ՝ առանց խոշոր կա-
պիտալիստական տնտեսութեան անկարելի պիտի լինի
ունենալ այն սօցիալական նպաստաւոր հողը, որի
վրա միայն կարող է ստեղծուել ու մարզուել սօցիա-
լական մեծ առաքելութեան համար ընդունակ, գի-
տակից, հասուն և կազմակերպ բանւորութիւն: Այն-
տեղ, ուր խոշոր կապիտալիստական տնտեսութիւնն
իշխող չէ բացարձակապէս, ինչպէս, օրինակ, Անգ-
լիայում, Բելգիայում, Գերմանիայում, այնտեղ, ուր
կապիտալիզմի աճումը չի հասել իր գագաթնակէտին,
չկան և չեն կարող լինել նաեւ այն նախապայմաննե-
րը, որոնք բացարձակապէս անհրաժեշտ են սօցիա-
լիզմի իրականացման համար, հետեւաբար այնտեղ չի
կարող որեւէ լուրջ խօսք լինել սօցիալիստական կար-
գերի անմիջական ստեղծման մասին:

Բռնի ոյժով, անվերջ ահաբեկումներով ու արիւն-

հեղութիւններով չէ որ սօցիալիզը երբ և է պիտի իրականանայ: Նա կգայ մի օր այնպէս, ինչպէս կտուցի մի չնչին հարւածով ձուի մէջ հասունցած հաւի ձագուկը ջարդում է իր կեղեւը և դուրս գալիս լոյս աշխարհ:

Այս բոլորը մարքսիզմի տարրական ճշմարտութիւններն են:

Լենինը մարքսիստ է և հեղինակ մարքսիստական մի լաւ գրքի՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» . բօլշևիկներն իրենց մարքսիստներ են անւանում, նոյնիսկ միակ մարքսիստներ: Բայց եթէ նըրանք այսօր պահպանել են տակաւին մարքսիստական ֆրազէօլօգիա, մարքսիստական ոչինչ չէ մնացել նըրանց մէջ: Նրանց մտածողութեան եղանակը, նրանց գործելակերպն ամենաչնչին չափով անգամ չունի իր վրա մարքսիստական կնիք: Ընհակառակը, առանց վերապահութեան կարելի է պնդել, որ բօլշևիկների այժմեան աշխարհայեցողութիւնն ու վարած քաղաքականութիւնը մարքսիզմին տրամագծօրէն հակառակ բաներ են:

Հրապարակ գալով համաշխարհային Սօցիալիստական Յեղափոխութեան նշանաբանով, բօլշևիկները սկզբում, երբ դեռ որոշ չափով տարւած էին մարքսիստական հովերով, իրենց ուշադրութիւնը դարձրին դէպի Արեւմուտք:

Նրանք հաւատացնում էին, որ իրենց արածը սօցիալիստական մի «էքսպերիմենտ», փորձ է: Նրանք ասում էին, որ Ռուսաստանի յեղափոխութիւնն այն ժամանակ միայն յաջողւած պիտի համարել, երբ նա կը ցնցէ և սօցիալիստական յեղաշրջում առաջ կը բերէ կապիտալիստօրէն զարգացած արեւմտեան երկրներում: Շուտով երեք տարի կլինի, որ բօլշևիկները իշխում են Ռուսաստանում, բայց արեւմտեան ոչ մի

պետութիւն չհրապուրւեց նրանց «սօցիալիստական» փորձից և հազիւ թէ հրապուրւի։ Որովհետեւ այդ իսկ փորձը բոլոր գիտակից սօցիալիստներին բերեց այն անյողդողդ համոզման, թէ ի՞նչ չպէտք է անել։ Այդ փորձն Եւրոպայի բոլոր գիտակից սօցիալիստներին յետ մղեց «ասիական» սօցիալիզմից, ինչպէս նրանք որակեցին բօլշևիզմը, և նրա գործադրած ասիական մեթոդներից։

Եւ այսպէս, Արեւմուտքը չընդունեց Լենինի «ասիական» սօցիալիզմը, չը նայելով, որ բօլշևիկները կրաւորական սպասողի դերում չմնացին և ոչինչ չըխնայեցին ներքին խռովութիւններ հրահրելու համար արեւմտեան երկրներում։ Ճիշտ է, նրանց յաջողւեց պարտւած երկիրների մէջ, օգտւելով ժողովրդական մասսաների բնական դժգոհութիւնից, ապստամբական շարժումներ առաջ բերել (Գերմանիա, Հունգարիա)։ Բայց այդ բոլորն անցողական երևոյթներ էին միայն։

Բօլշևիկների համար պարզ էր արդէն, որ այլևս որևէ լուրջ սպասելիք չունեն բուրժուական և իմպերիալիստական Եւրոպայից։ Եթէ նրանք լինէին շիտակ քաղաքական գործիչներ, նրանք պիտի հրաժարւէին անմիջապէս իշխանութիւնից, հէնց որ վիժեցին նրանց ծրագիրները Արեւմուտքում, և յայտնէին, որ իրենց «սօցիալիստական էքսպերիմենտը» անյաջող վախճան ունեցաւ։ Բայց իշխանութիւնը կուրացրել էր նրանց, և նրանք կարծում էին, որ, հաստատելով իրենց իշխանութիւնն երկրում, նրանք հաստատում էին նաև սօցիալիզմը։ Եւ որովհետեւ սօցիալիզմի անմիջական իրականացումը Ռուսաստանում անկարելի բան էր, իսկ իշխանութեան հաստատումը հնարաւոր, բօլշևիկներն սկսեցին լքել իրենց սօցիալիստական դիրքերը, մէկը միւսի յետևից, և իրենց բոլոր ճիգերը ուղղեցին մի նպատակի՝ իրենց

իշխանութեան ամրապնդման: Բայց իշխանութեան ամրապնդումը մի պետութեան մէջ գերազանցապէս կախած է այն բանից, թէ որ չափով իշխող կուսակցութիւնն իւրացնում է պետութեան ուժաւ և ոչ ցընորական շահերն ու պահանջները: Եւ բնական է, որ բօլշևիկներն ևս, ենթարկւելով պատմութեան երկաթէ օրէնքներին, հարկադրւած պիտի լինէին թողնել իրենց իմբակցական նպատակները և պաշտպանել այն շահերը, որ առաջադրում է ռուս պետութիւնը, ընդառաջ գնալ այն պահանջներին, որ անում էր իշխանութեան՝ ռուս ժողովուրդը, ռուս ազգը:

Եւ ահա այսպէս ծայրայեղօրէն կօմսպօլիտական (աշխարհաքաղաքացիական) կուսակցութիւնը դարձաւ իր էութեամբ մի ազգային ռուսական և նոյնիսկ ռուս իմպերիալիստական կուսակցութիւն:

Իշխանութիւնն ամրացնելու և Ռուսաստանի միջազգային դրութիւնը փրկելու համար էր, որ բօլշևիկները, երես դարձնելով իմպերիալիստական Արեւմուտքից, դիմեցին պանիսլամիստական Արեւելքին, այսինքն՝ Արեւելքի ամենայնատաղէմ և արիւնարբու ոյժի օգնութեան: Սա չէր խանգարում, որ այստեղ էլ պահպանւէր սօցիալիստական, կօմմունիստական ֆըրազէօլօգիան՝ սա չէր խանգարում, որ «կարմիր» նըշանաբանների և ֆրազների տակ թագնւէին ամենասեւ ձգտումներ:

Եւ այս աղաղակող հակասութիւնը ծածկելու համար, բօլշևիկները ստեղծեցին մի ամբողջ թէօրիա, որով նրանք ձգնում էին ապացուցել, թէ յեղափոխութիւնն ու սօցիալիզմը շատ աւելի նպաստաւոր հող ունեն արեւելեան յետամնաց երկրներում, քան արեւմուտքի կապիտալիստական երկրների մէջ: Այսպիսով բօլշևիկների կօմմունիզմը, որ սկզբում ձըգտում էր դէպի առաջ, դէպի աւելի կատարեալ տըն-

տեսակարգ, քան կապիտալիստականն է, իշաւ մինչև նախնական կօմմոնիզմը, իր հայեացքն ուղղեց դէպի յետ, գնաց ամենաթոյլ դիմադրութեան ճանապարհով:

Սխալ պիտի լինէր բօլշևիկների մղումը դէպի Արևելք բացատրել միայն քաղաքական նկատառումներով: Այստեղ անշուշտ խոշոր դեր են կատարում նաև սօցիալական մօտիւնները: Բօլշևիկական կօմմոնիզմը, որ յետամնաց Ռուսիայում ի վերջոյ վերածւեց նախնական կօմմոնիզմի, բնականաբար ամենից աւելի խոր արձագանգ պիտի գտնէր արևելեան յետամնաց երկրներում:

Ասա՛ ինձ՝ ո՞վ է քո ընկերը, և ես կասեմ՝ ո՞վ ես դու:

Եւ իրաւ. գերմանական պատերազմից, և անհամեմատ աւելի երեք տարւայ քաղաքացիական կռւից քայքայւած և իր տնտեսութեան ներկայ վիճակով մինչև 17րդ դարը յետ մղւած Ռուսաստանը, որին ըստպառնում է անխոլսափելի վտանգ գաղութային վայր դառնալու եւրօպական ու ամերիկեան կապիտալիզմի համար, և մեռնող ու անդամահատւող թիւրքիան, — ո՞րքան նմանութիւն նրանց վիճակի մէջ: Տարբեր ծայրերից ելնելով և տարբեր նշանաբաններով. ռուս բօլշևիկները և թուրք միլլիճիները, իւրաքանչիւրն իր ժողովրդին յատուկ ձևերով ու մեթոդներով, կատարում են գերազանցապէս ազգային — պետական գործ:

Այո՛, ռուս բօլշևիկները բռնի ոյժով և դաւերով ձգտում են այսօր հաւաքել ցարերի ստեղծած հսկայ Ռուսաստանը, որի առաջ մի ժամանակ դրդում էր ամբողջ աշխարհը, ճիշտ այնպէս, ինչպէս և թուրք միլլիճիները կամենում են վերականգնել կարմիր սուլթանների ստեղծած վաղեմի հզօր Օսմանեան կայսրութիւնը...

III

ԲՕԼՇԵԻԻԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՈՅԺՆ ՈՒ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Նրանք, որ ծանօթ չեն բօլշևիկեան Ռուսաստանի ներքին վիճակին, տրամադիր են չափազանց գերագնահատելու բօլշևիկների ոյժը: Կարծում են, թէ դա իրապէս մի անուելի ոյժ է, որ ի վիճակի է իր կամքը տիրաբար թելադրելու ամբողջ աշխարհին:

Իրական ոյժերի փոխյարաբերութեան այդքան միամիտ գնահատման մէջ անշուշտ խոշոր դեր են կատարում յաղթող մեծ պետութեանց երերուն դիրքը բօլշևիկների հանդէպ, որ իրենք բօլշևիկները վախով են բացատրում, և բօլշևիկների ռազմական յաջողութիւնները ռուսական ներքին ճակատների վրա (Կօլչակ, Դենիկին): Մինչդեռ դաշնակիցներն իրօք երբէք չեն վախեցել բօլշևիկներից, այլ կամեցել են միայն նրանց մղած քաղաքական կռիւր հրահրել՝ թուլացնելու համար Ռուսաստանը եւ իրագործելու համար նախկին ռուսական կայսրութեան սահմաններում իրենց քաղաքական այն ծրագիրները, որ նրանք (գլխաւորապէս Անգլիան) առաջադրել են: Ճիշտ է, նրանք բացայայտօրէն օգնել են և Կօլչակին, և՛ Դենիկինին, և՛ բոլոր հակաբօլշևիկեան ոյժերին, բայց և միևնոյն ժամանակ իրենց քաղաքական դիւային խաղերով շատ էական օգնութիւն են հասցրել նաև բօլշևիկներին: Վերջինները, զգալով ու գիտակցելով, որ առանց դաշնակիցների հետ համաձայնութեան գալու, անկարելի է վերջ դնել քաղաքական կռիւն Ռուսաստանում, բազմաթիւ անգամներ դիմեցին նրանց և խոստացան ամեն տեսակի զիջումներ ու տրտօնութիւններ, միայն թէ իրենց հանգիստ թողնեն: Եւ բօլշևիկների արևելեան քաղաքականութիւնը ու-

ըիշ բան չէ, եթէ ոչ միջոց սպառնալու դաշնակիցներին, որպէսզի սրանք վերջապէս ուշադրութեան առնեն բօլշևիկների դիմումները, ճանաչեն նրանց եւ հաշտութիւն կնքեն նրանց հետ: Ուրիշ խօսքով՝ բօլշևիկների արեւելեան դաւերը միայն ապացոյց են նըրանց քաղաքական անզօրութեան ու սնանկութեան:

Ով հետեւել է բօլշևիկների դիւանագիտական ճիգերին, նա չէր կարող չնկատել, որ բօլշևիկների գերագոյն տենչանքն է արժանանալ վերջապէս հզօր պետութեանց ողորմածութեան: Եւ պէտք է քաղաքական մանուկ լինել կարծելու համար, որ դաշնակիցները չեն կարող, երբ որ կամենան, զսպել բօլշևիկներին և ստիպել նրանց կանգնելու այնտեղ, ուր որ իրենք կը մատնանչեն: Ռուսաստանի քաղաքացիական կռիւի այն բոլոր վայրկեաններին, երբ կռուող կողմերը ուժեղացել են աւելի, քան ցանկալի է եղել դաշնակիցներին, կամ սպառնացել են արդէն այն շրջաններին, որոնք քաղաքական մեծ կարեւորութիւն են ունեցել դաշնակիցների համար, դաշնակիցները միշտ գտել են միջոցներ (կամ դիպլօմատիական խաղերով կամ նորանոր ճակատներ ստեղծելով) յաղթող ոյժի առաջն առնելու:

Բաւական է վերյիշել միայն պատերազմական իրադարձութեանց ընթացքը վերջին երկու տարւայ մէջ նախկին կայսրութեան սահմաններում, որպէս զի պարզ լինի այդ: Երբ անցեալ տարի աշնան Դենիկինի զօրքերը մօտենում էին Մօսկւային, թւում էր, թէ ամեն ինչ վերջացած է արդէն, թէ բօլշևիկների օրերը հաշւած են արդէն: Բայց յանկարծ, հիւսիսային ֆրօնտը անգլիացիք թողին ու հեռացան, յանկարծ Մերձբալթեան ճակատում ինչ որ խորհրդաւոր անցքեր պատահեցին ի նպաստ բօլշևիկների, Լեհաստանն ու Ռումանիան, որոնք սկսել էին կռիւներ բօլշևիկ-

ների դէմ, յանկարծ կանգ առան անհասկանալի պատ-
ճառով և վերջապէս Դենիկինի յետևում, Ուկրայնա-
յում, երևացին զանազան ուժեղ պարտիզանական
խմբեր, որոնք կապ ունէին Պետլիւրայի հետ, իսկ
վերջինս պաշտպանւում էր դաշնակիցների կողմից։
Իսկ այս տարի, երբ բօլշևիկները, ընդհակառակը,
սկսեցին յաղթել իրենց թշնամիներին, նրանց յա-
ջողւեց ջախջախել Դենիկինին, և թւում էր արդէն
թէ ամեն ինչ վերջացած է, թէ բօլշևիկները իրերի
տէր են Ռուսաստանում, և թէ նրանց յաղթանակը
վերջապէս ապահովւած է։


Քիչ չէին նաև մեզ մօտ այգալիսիք, որոնք հա-
ւատում էին, թէ մէկ երկու շաբաթ ևս, և բօլշևիկ-
եան հեղեղը հիւսիսից կհասնի մեր սահմանները։ Եւ
Բագւի մէջ կատարւած բօլշևիկեան — տաճկական
Ֆարսը նոյնիսկ խուճապային տրամադրութիւն առաջ
բերեց շատ շատերի մէջ։ Արդէն կարծում էին, որ
հիւսիսի բօլշևիկեան զօրքերը մէկ երկու օրից յաղ-
թականօրէն կմտնեն նաև Հայաստան։

Բայց ո՛րքան դառն պէտք է լինի հիասթափու-
թիւնն այն բոլոր մոլորւած և բաղդախնդիր մարդ-
կանց, որոնք իրենց յոյսերը դրել են հիւսիսից գա-
լիք ոյժերի վրա։ Եթէ իրաւ բօլշևիկեան զօրքերը
մտել են Բագու, նրանք չեն կարող այնտեղ շատ ու-
ժեղ լինել և, որ գլխաւորն է, երկար մնալ։

Ինչո՞ւ։ Որովհետև վերջին մէկ երկու շաբաթւայ
ընթացքում բօլշևիկեան Ռուսաստանի քաղաքական
և ռազմական դրութիւնը կրկին այնքան վատթարա-
ցաւ որ բօլշևիկները չեն կարող մեծ զօրք տրամադրել
կովկասեան իրենց իսկական թէ քողարկւած գաղա-
փարակիցների աւանտիւրանների համար։

Լեհաստանը, որ երկար ժամանակ լուռ հանդի-
սատես էր բօլշևիկներին յետուառաջին և մատը մա-

81178
A 81178



տին չխփեց Դենիկինին փրկելու համար վերջնական ջախջախումից, այսօր յանկարծ իր ամբողջ ուղղման թափով հրապարակ է եկել բօլշևիկեան Ռուսաստանի դէմ, որ արդէն միամտօրէն կարծում էր, թէ կարող է հանգստանալ վերջապէս և վայելել իր յաղթանակի պտուղները։ Լեհաստանի հետ միացած է Ուկրայնան յանձին Պետլիւրայի կառավարութեան։ Վերջինիս հետ միասին գործում է հռչակաւոր Մախնօն, որ ամենամահացու հարւածը հասցրեց անցեալ տարի Դենիկինին։ Լեհական և ուկրայնական զօրքերը գրաւել են Կիւքը և սպառնում են Օդեսային։ Իսկ նրանց դաշնակից Մախնօն, արդէն մօտեցել է Խարկովին։ Ղրիմում կամաւորական բանակմնացորդները, վերականգնելով գեներալ Վրանգելի գլխաւորութեամբ պատրաստում են յարձակողականի անցնելու։ Ֆինլանդիան, որ սկսել էր հաշտութեան բանակցութիւններ բօլշևիկներին հետ, յանկարծ այնպիսի անհաշտ դիրք բռնեց նրանց հանդէպ, որ բօլշևիկները ստիպւած հղան թողնել բանակցութեանց վայրը և ձեռնունայն տուն վերադառնալ։

Այս բոլոր իրադարձութիւնները մեծ իրարանցում են առաջ բերել բօլշևիկներին աշխարհում։ Եւ նորից ահազանգ է հնչում Մօսկւայից։

Վտանգն այնքան մեծ է բօլշևիկներին համար, որ վերջիններս հարկադրւած են ստեղծելու մի տրտալար գինւորական խորհուրդ՝ կազմւած ցարական գեներալներից և նոյնիսկ մի ցարական նախարարից (Պօլիվանով)։ Աւելին, բօլշևիկները այս անգամ իրենց դիմակները վայր են նետել և յայտարարել թէ Ռուսաստանը ստիպւած է ազգային կռիւ մղել Լեհաստանի դէմ, որը կամենում է ռուսական շրջանները նւաճել։

Բօլշևիկներին դրութիւնը բնաւ ապահով չէ նաև Հիւսիսային Կովկասում, և կօղակներին մէջ վտանգա-

և որ խմորումներ են նկատուում նորից բօլշևիկների դէմ:

Բայց բօլշևիկների դրուժիւնը ապահով չէ կարող լինել նոյնպէս և Ադրբէջանում ու Դաղստանում, ուրոնք Սօվետական, բօլշևիկեան գոյն ընդունելով, մեծ խոստումներ են ստացել բօլշևիկներից իրենց պանիսլամիստական մութ ծրագիրների իրագործման համար և որոնք դաժան յուսախաբութիւն պիտի ունենան անտարակոյս, երբ տեսնեն, որ ոուս բօլշևիկները ոչ մի իրական օգնութիւն չեն տալիս նրանց, այլ միայն իւրացնում—տանում են Բագւի նաւթը դէպի հիւսիս միլիօնաւոր փթերով և փոխարէնը ոչինչ չեն տալիս ու չեն էլ կարող տալ: Եւ այն օրը, երբ դաշնակիցները կթելադրեն բօլշևիկներին հրաժարւել Բագւից՝ այդ գնով ձեռք բերելու համար հաշտութիւն, մի օր անգամ չի մնայ այնտեղ Սօվետական իշխանութիւնը:

Ինչո՞ւ: Որովհետեւ բօլշևիկների գերագոյն մտահոգութիւնն է փրկել իրենց դրուժիւնը բուն Ռուսաստանում: Այս նպատակի համար նրանք պատրաստ են շատ և շատ կարեւոր շահերից հրաժարւել:

Բօլշևիկների դրուժիւնը Ռուսաստանում այնքան խախուտ է ամեն տեսակէտով, և դաշնակիցների ըստեղծած նոր վտանգը Լեհաստանի, Ուկրայնայի, Մախնօյի, Ֆինլանդիայի, Վրանգելի և շուտով թերեւս նաեւ Ռումանիայի կողմից այնքան սպառնական է, որ բօլշևիկները, հակառակ իրենց բոլոր ցանկութիւններին՝ չեն կարող ագրեսիւ քաղաքականութիւն վարել ոչ հանդէպ դաշնակիցների և ոչ էլ հանդէպ այն բոլոր ազգային ոյժերի, որոնց յետևում կանգնած են դաշնակից պետութիւնները:

Դրա լաւագոյն ապացոյցն այն է, որ բօլշևիկները, որոնք այնքան անհաշտ և գրգռիչ նօտաներ էին

ուղարկում վրաստանին, ընդամենը մի ամիս առաջ, երբ լեհացիներն և ուկրայնացիք դեռ չէին սկսել իրենց ընդհանուր յարձակողականը Ռուսաստանի դէմ, այսօր, երբ վրաստանի հարեան Ադրբէջանը բօլշևիկեան է դառել, անհրաժեշտ են գտել հաշտութիւն կնքելու վրաստանի հետ, ճանաչել այդ երկրի անկախութիւնը և գէթ առժամանակ հրաժարուել նրաներէն գործերի մէջ խառնուելու յաւակնութիւններէն:

Բայց միայն վերոյիշեալ իրադարձութիւնները չեն, որ ստիպում են բօլշևիկներին շտապել հաշտութիւն կնքելու ոչ միայն վրաստանի, այլ և բոլոր պետութեանց հետ: Պատճառները շատ աւելի խոր են:

IV

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Բօլշևիկեան Ռուսաստանի ամենավիրաւոր, ամենավրձանգաւոր և, ես պիտի ասեմ, ճակատագրական կողմը նրա տնտեսութիւնն է: Այդ տնտեսութիւնը գտնուում է այսօր, բառիս իսկական իմաստով, կատաստրօֆիկ վիճակի մէջ:

Եթէ կամենայինք փնտռել այդ օրհասական քայքայման պատճառները, պիտի գտնէինք, որ կան չորս գլխաւոր պատճառներ. ա. համաշխարհային պատերազմը, բ. բօլշևիկների սօցիալ-տնտեսական խելայեղ «էքսպերիմենտը», գ. գրեթէ երեք տարի անընդհատ շարունակուող քաղաքացիական կռիւը, որ միշտ բոլոր պատերազմներից ամենից աւելի արիւնոտն ու կործանարարն է լինում, և վերջապէս, դ. այն պաշարման վիճակը, որին ենթարկւած է բօլշևիկեան Ռուսիան դաշնակից պետութիւնների կողմից:

Առաջին պատճառը կատարել էր իր քայքայիչ գործը անկախ բօլշևիկների կամքից և մի տխուր ժառանգութիւն էր նրանց համար: Բայց մնացած երեք

պատճառներն ամբողջովին հետեւանք են բօլշևիկներին
ներգործօն քաղաքականութեան :

Խօսենք նախ բօլշևիկներին տխրահռչակ սօցիալ
տնտեսական էքսպերիմենտի մասին, որի միջոցով նը-
րանք կարծում էին, թէ պիտի իրականացնեն անմի-
ջապէս սօցիալիստական կարգերը Ռուսաստանում և
իրենց «բարի» օրինակով վարակեն համայն աշխարհը :

Երբ տեղի ունեցաւ գերմանական յեղափոխու-
թիւնը, տապալւեց իւնկերների կառավարութիւնը և
իշխանութեան գլուխը անցան գերմանական սօցիա-
լիստները, որոնց կազմակերպութիւնն ամբողջ երկրա-
գնդի վրա ամենամեծն է և ամենակուռը, սրանք ոչ
մի հնարաւորութիւն չգտան անմիջապէս սօցիալիստա-
կան յեղաշրջում մտցնելու իրենց երկրում : Թւում էր
թէ, եթէ, իրաւ, կայ մի երկիր, որ հասունացած է
սօցիալիստական կարգերի համար, ամենից առաջ այդ
պիտի լինէր Գերմանիան, որի ազգաբնակչութեան եր-
կու երրորդ մասը կազմում է բանւորութիւնը : Մա-
նաւանդ, որ չկար սօցիալիստօրէն աւելի գիտակից,
աւելի կարգապահ, աւելի աշխատասէր և սօցիալա-
կան զգացումի տէր և քաղաքականապէս մարզւած մի
բանւորութիւն, քան գերմանականն էր, որի հսկայա-
կան կազմակերպութիւնները հիացմունք էին առաջ
բերում ամբողջ աշխարհում, նոյնիսկ թշնամի բանա-
կում :

Բայց ի՞նչ պատահեց : Գերման բանւորութեան
մեծագոյն մասի ներկայացուցիչները, որոնց ձեռքն
անցել էր ամբողջ իշխանութիւնը և որոնք ամենա-
լայն հնարաւորութիւններն ունէին իրագործելու ի-
րենց սօցիալիստական ձգտումները, քննելով Գերման-
իայի տնտեսութեան վիճակը՝ եկան այն եզրակացու-
թեան, թէ փորձ անել սօցիալիստական կարգեր մըտ-
ցնելու մի այնպիսի ժամանակ, երբ երկրի ամբողջ

տնտեսութիւնը քայքայւած է համաշխարհային պատերազմի պատճառով, նշանակում է նախօրօք անյաջողութեան դատապարտել այն և միանգամայն վարկաբեկել սօցիալիզմի գաղափարը լայն մասսաների մէջ:

Եւ եթէ Գերմանիայի պէս մի պետութեան մէջ իշխող սօցիալիստական կազմակերպութիւնների ներկայացուցիչները ներկայ պայմաններում վտանգաւոր համարեցին սօցիալիզմի անմիջական իրականացումը, ապա ի՞նչ խօսք կարող էր լինել իր ազգաբնակչութեան ճնշող մեծամասնութեամբ դիւղացիական Ռուսաստանի մասին, որի մէջ ոչ մի լուրջ առարկայական (օրինակով) նախապայման չկար սօցիալիստական յեղաշրջման համար մանաւանդ, որ պատերազմը զգալի հարւածներ էր հասցրել նոյնիսկ այն փոքրիկ կապիտալիստական օջախներին, որոնք այնքան դժւարութեամբ ստեղծւել էին ցարական կառավարութեան հովանու տակ մի քանի տասնեակ տարիների ընթացքում:

Չնայելով դրան, բօլշևիկները՝ առանց երկար ու լարակ մտածելու՝ որոշեցին մի ծանր փորձ, «սօցիալիստական էքսպերեմենտ» անել իրենց գժբաղդ երկրի գլխին և մի լաւ դաս տալ «ճահճացած» Արեւմուտքի հաստագլուխ սօցիալիստներին, թէ և վերջիններից էին նրանք իւրացրել սօցիալիզմի տարրական հիմունքները:

Կապիտալիստական դասի ձեռքից աննախնթաց բռնութիւններով խլեցին արդարութեան բոլոր միջոցները եւ ամբողջ տնտեսութեան ղեկավարութիւնը յանձնեցին ընչազուրկ տարրերին թէ քաղաքներում և թէ գիւղերում: Հետեւանքն եղաւ այն, որ մարդիկ, որոնք իրենց հոգեբանութեամբ դեռ ստրուկներ էին, ծոյլ և տգէտ, փոխանակ զարկ տալու արտագրու-

թեան, գերադասեցին սպառել այն, ինչ որ հեշտութեամբ ընկնում էր նրանց ձեռքը: Ինչո՞ւ աշխատել, քանի որ կարելի է վայելիլ: Երէկ ուրիշներն («բուրժուաներն») էին վայելում, այսօր էլ մենք կը վայելենք, — այս էր իշխող մտայնութիւնն այն բոլոր հողագործի և տգէտ մասսաների, որոնք գնում էին բօլշևիկներէ յետեւից:

Իրենց իշխանութիւնն ամրապնդելու գերագոյն մտահոգութեամբ տարւած՝ նրանք հարկադրւած էին յագուրդ տալ ամբոխի ամենաստոր ընտելներին ու ախորժակներին: Այդ կազմակերպւած թէ անկազմակերպ թաւանի հետեանքով աշխատանքի արտադրողականութիւնը ընկաւ չտեսնւած չափերով թէ քաղաքում և թէ գիւղերում: Բազմաթիւ գործարաններ կամ բնաւ ոչինչ կամ գրթէ ոչինչ չէին արտադրում, թէև նրանք ունէին բազմահազար բանւորներ, որոնք ապրուստի միջոցներ և թաւանի հնարաւորութիւններ էին ստանում բօլշևիկեան կառավարութիւնից: Այդ բանւորները հետզհետէ կազմեցին մի արտօնեալ դասակարգ, որ շատ խոշոր ծառայութիւն էր մատուցանում բօլշևիկներին, դառնալով յենարան նրանց միահեծան տիրապետութեան համար:

Գիւղում այդ տիպի բանւորների դերը կատարում էին ընչազուրկ, աղքատ գիւղացիները (այսպէս կոչւած) որոնց քմահաճոյքին էին յանձնել բօլշևիկները մնացած գիւղացիների (այսինքն՝ նրանց ճնշող մեծամասնութեան) ոչ միայն գոյքը, այլ և կեանքը: Այս հողի վրա ծագեցին զարհուրելի արիւնհեղութիւններ, ջարդեր և պոգրոմներ հսկայական տարածութիւնների վրա: Հողատէր, բայց աշխատաւոր գիւղացիութիւնը ցոյց տւեց այնպիսի հերոսական դիմագրութիւն բօլշևիկներին և նրանց հովանաւորած «աղքատներին», որ լեները ի վերջոյ ստիպւած եղաւ, իր իշխանու-

թիւնը չկորցնելու համար, զիջել աշխատաւոր գիւղացիութեան: Նոյնօրինակ զիջումներ նա հարկադրւեց անել և քաղաքում մանր բուրժուազիային:

Եթէ սակայն այդ նահանջը փրկեց բօլշևիկներին քաղաքականապէս, բայց նա չէր կարող զգալի կերպով բարեփոխել երկրի տնտեսական վիճակը: Որովհետև բօլշևիկները չունէին քաղաքացիական քաջութիւն իսպառ հրաժարւելու իրենց էքսպերիմենտների քաղաքականութիւնից և բուլականում էին տնտեսական կարկատաններով, որոնց գլխաւոր դրդապատճառը՝ իշխանութիւնն ամեն գնով իրենց ձեռքը պահելու մտահոգութիւնն էր:

Ջանադան «սօցիալիզացիաների, նացիօնալիզացիաների և մուսիցիպալիզացիաների» էքսպերիմենտները, փորձերը հիմնովին քայքայեցին Ռուսաստանի տնտեսութիւնը թէ գիւղում և թէ քաղաքում: Այդ քայքայումն այնքան աղաղակող էր և բօլշևիկների մղած քաղաքացիական կռւի պահանջներն այնքան էին հրամայական, որ իրենք՝ բօլշևիկները աստիճանաբար սկսեցին դիմել այնպիսի միջոցների, որոնք տրամագծօրէն հակառակ էին նրանց քարոզած նախկին գաղափարներին: Զրկեցին նոյնիսկ բանւորներին իրենց դասակարգային շահերը պաշտպանելու գրեթէ բոլոր իրաւունքներից:

Սպառնալիքներով և ցինիկ խաբեքայութիւններով, որոնք միշտ ամենավարպետ կերպով քողարկւում են սօցիալիստական, կօմմունիստական կեղծ պատճառաբանութիւններով, 8 ժամեայ բանւորական օրը, որի համար նրանք ժամանակին այնքան գլուխ էին պատռել, դարձրին 10—12 ժամեայ բանւորական օր: Սկսեցին շահագործել բանւորների աշխատանքը և կիրակի ու տօն օրերին:

Նոյնիսկ Մայիսի մէկը, որ աշխատաւորութեան

տօնն է և հանգստի օր, դարձրին 10—12 ժամեայ աշխատանքի օր: Մտցրին աշխատանքի ստիպողական ընդհանուր ծառայութիւն, որ իր խստութեամբ շատ քիչ է տարբերուում զինւորական ծառայութիւնից: Մի խօսքով՝ մտցրին տնտեսական մի սխտեմ, որի նմանը կարելի է գտնել միայն հին դարերում, փարաւոններին և ուրիշ արեւելեան բռնապետների մօտ կամ հռօմէական կայսրութեան օրերում, և որը ոչ մի առնչութիւն չի կարող ունենալ աշխատանքը և աշխատաւորութիւնը ազատագրելու կոչւած սօցիալիզմի հետ:

Այսպիսով բօլշևիկները իրենց ասիական սօցիալիզմով և ասիական բռնութիւններով ու մեթօդներով մի նոր, աւելի լաւ տնտեսակարգ չստեղծեցին, այլ գահավիժելով հասան մինչև հին դարերը և տնտեսութեան ասիական սխտեմները:

Սա մի աւելորդ ապացոյց է, որ բօլշևիզմն իր նշանաբաններով ու ֆրազներով է միայն առաջդիմական շարժում, մինչդեռ իր էութեամբ անտարակուսելիօրէն յետադիմական և հակայեղափոխական է: Որովհետև նա չէ յեղափոխականը, որ ամենից աւելի «թունդ» յեղափոխական ֆրազներով ու նշանաբաններով է հրապարակ գալիս, այլ նա, որի գործերը յեղափոխական արդիւնքներ հն տալիս: Բօլշևիկներն իրենց իսկ ձեռքով տանում են Ռուսաստանը դէպի բէակցիա, դէպի գաղութային ստրկացում և միահեծան բռնապետութիւն:

Ռուսաստանի ներկայ տնտեսական կատաստրոֆն առաջ բերելու մէջ ահագին դեր կատարեց նաև գրեթէ հրեք տարի տեղող քաղաքացիական կռիւը, որ ամենից առաջ մահացու հարւած հասցրեց հաղորդակցութեան, փոխադրութեան միջոցներին: Շոգեկառքերը (պարօվօզները)՝ փչացած, վագոնները՝ ջարդւած, ճանապարհները քանդւած, կամուրջները՝ օդը ցնդած,

— Եւ զայս արտակարգ ռուսական արգի երկաթուղիներէ :
 Րեկվիզիցիաներէ շնորհիւ և հազար ու մի այլ պատ-
 ճառներով գիւղերում անասունների թիւը այն աստի-
 ճան ընկաւ, որ գիւղացին, եթէ անգամ շատ հող ու-
 նենայ և կամենայ մշակել իր ամբողջ հողը, անասուն-
 ների բացակայութեան կամ պակասութեան պատճառով
 չպիտի կարողանայ շատ բան անել : Ինչ որ մնա-
 ցած էր «աղքատ» գիւղացիների «սօցիալիստական»
 գործունէութիւնից, ալան թաւանի ու ոչնչացման են-
 թարկւեց գրեթէ բոլոր ամենաբարեբեր նահանգներում
 քաղաքացիական կռիւ անվերջ յետուաւանների ժա-
 մանակ :

Վերջապէս, բօլշևիկեան Ռուսաստանի ծովապա-
 շարման վիճակը լրացրեց երկրի տնտեսական աւեր-
 ման պատկերը :

Բօլշևիկներն իրենք էլ շուտով գլխի ընկան, որ
 առանց եւրոպական ու ամերիկեան մեքենաների, կա-
 պիտալի՝ Ռուսաստանը «չ մի դէպքում չպիտի կարո-
 ղանայ վերականգնել իր հաղորդակցութեան միջոցները,
 իսկ առանց հաղորդակցութեան միջոցների վերականգ-
 նման՝ անկարելի պիտի լինի առհասարակ ոտի կանգ-
 նեցնել Ռուսաստանի մեռնող տնտեսութիւնը :

Բօլշևիկները հասկացան նոյնպէս, որ առանց կա-
 պիտալիստական երկիրների ապրանքների՝ անկարելի
 պիտի լինի բաւարարել լայնածաւալ երկրի միլլիոնա-
 ւոր կարիքները :

Ահա թէ ի՞նչու հաշտութիւնը կապիտալիստական
 Եւրօպայի ու Ամերիկայի հետ դասել է այսօր Ռու-
 սաստանի ամենաաղաղակող եւ ամենահրամայական
 պահանջը : Բօլշևիկների գոյութեան հարցը մեծապէս
 կախւած է այն բանից, թէ ո՛րքան շուտ և որքան
 յաջող կերպով նրանք պիտի կարողանան հաշտութիւն
 կնքել կապիտալիստական հզօր երկիրների հետ : Բօլ-

չեւիկների բաղդի բանալին այսօր ամբողջովին գտնու-
ւում է դաշնակից պետութեանց ձեռքում :

Եւ բօլշևիզմը, պատմութեան երկաթէ տնհրա-
ժեշտութեամբ և տնխոսափելիութեամբ, պիտի ջախ-
ջախւի ու ճգմւի, եթէ նա գլուխ չխոնարհէ կապի-
տալիստական աշխարհի առաջ և չհրաժարւի իր կոր-
ծանարար ցնորքներից և էքսպերիմենտներից :

V

Ի՞նչ է ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

Բօլշևիզմը, ֆրազէոլոգիան սօցիալիստական է,
բայց նրա էութիւնը և պայքարի մեթոդները միան-
գամայն հակառակ ժամանակակից գիտական սօցիալիզ-
մին : Բօլշևիզմը սպառնողական սօցիալիզմ է, նախ-
նական կօմմունիզմ : Նրա իդեալի իրական աղբիւրը
ոչ թէ ապագան է, այլ անցեալը, ոչ թէ առաջդէմ
Եւրոպան է, այլ յետադէմ Ասիան :

Բայց ի՞նչ է սօցիալիզմը :

Սօցիալիզմն ամենից առաջ և գերազանցապէս ա-
ւելի բարձր, աւելի կատարեալ օնօնսակարգ է, քան
այն կապիտալիստականը, որ տիրում է այսօր աշ-
խարհիս ամենակուլտուրական և ամենաերջանիկ եր-
կրներում (Անգլիա, Ամերիկա, Գերմանիա և այլն) : Որ-
ևէ տնտեսակարգի բարձրութիւնը և առաւելութիւնը
կարելի է չափել ւաժառանգի արտադրողականութեան
ասօրհանով : Առայժմ մարդկութիւնը չի կարողացել
ստեղծել աւելի բարձր տնտեսութիւն, քան այն, որ
գոյութիւն ունի այսօր կապիտալիստական կոչւած
պետութեանց մէջ : Ինչո՞ւ : Որովհետեւ կապիտալիս-
տական խոշոր տնտեսութեան մէջ է յաջողւել բարձ-
րացնել աշխատանքի արտադրողականութիւնն այն
աստիճան, որին չէ հասել և ոչ մի այլ տեսակի տըն-

տեսութիւն : Իսկ կապիտալիստական խոշոր տնտեսութեան մէջ ամենամեծ դերը կատարում են արտադրութեան միջոցները, այսպէս կոչւած մնայուն կապիտալը : Արտադրութեան այն միջոցները, որոնք գիտութեան և տեխնիքայի վերջին խօսքն են ներկայացնում, — հսկայական մեքենաները, շոգեշարժները, էլէքտրաշարժները և նորագոյն կատարելագործւած գործիքները, որոնք ուրիշ, աւելի յետամնաց տնտեսութիւններին անմատչելի են, շատ խոշոր չափերով բարձրացնում են մարդու աշխատանքի արդիւնաւէտութիւնը :

Միւս կողմից՝ աշխատանքը մեծ կապիտալիստական գործարանների մէջ, այդպիսի մեքենաների ու գործիքների վրա, հիմնովին փոխում է աշխատաւորի հոգեբանութիւնը : Դարձնում է նրան անհամեմատ աւելի կարգապահ, ուշիմ, տոկուն, աւելի վարժ, աւելի ինտելիգենտ և ուժեղ, ու մեծապէս զարկ է տալիս նրա սօցիալական զգացումների զարգացման :

Այդպիսի բանւորների աշխատանքը բնականաբար պիտի լինի զգալիօրէն աւելի արդիւնաւէտ, քան այն բանւորներինը, որոնք աշխատում են նահապետական պայմանների մէջ :

Այսպիսով կապիտալիզմը, կապիտալիստական խոշոր տնտեսութիւնը ստեղծում է թէ առարկայական (մեքենաներ և այլն), թէ ենթակայական (հոգեբանական) պայմաններ, որոնք մեծ չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականութեան, արդիւնաւէտութեան աստիճանը : Անգլիայում, ուր կապիտալիզմը ամենահինն է և ամենից բարձրը, բանւորը, նոյնքան ժամանակի ընթացքում արտադրում է 2—3 անգամ աւելի, քան ռուս բանւորը, որ աշխատում է աւելի յետամնաց միջոցներով և նահապետական պայմաններում : Իսկ հայ բանւորը անտարակոյս արտա-

դրում է մէկ ու կէս անգամ աւելի նւազ, քան ռուս բանւորը:

Միամտութիւն է կարծել, թէ մարդկանց քմահաճոյքից է կախւած տնտեսութեան մի ձևից մի աւելի բարձր ձևի անցնելը: Պէտք է, որ կատարւի տնտեսական մի մեծ պրոցես, որի ընթացքում հիմնովին փոխւի տնտեսութեան բովանդակութիւնը, որպէսզի հնարաւոր լինի փոխել տնտեսութեան ձելը: Կապիտալիստական տնտեսութեան ծոցում տեղի է ունենում դանդաղօրէն, յարաճունօրէն կազմաւորումն այն բարձր սոցիալիստական տնտեսութեան, որը մի օր, փոխելով միայն իր ձելը, իր երևոյթը, պիտի փոխարինէ կապիտալիստականը:

Վերցնենք կապիտալիզմի մայր երկիրը՝ Անգլիան և տեսնենք, թէ ի՞նչ առաւելութիւններ կարող է տալ այնտեղ սոցիալիզմի իրականացումը բանւոր դասի համար, որ կազմում է ազգաբնակչութեան երկու երրորդական մասից աւելի: Նախ և առաջ այնտեղ կայ երկար ժամանակի ընթացքում ստեղծւած մի հսկայական կապիտալ, որ ծառայում է իբրև արտադրութեան միջոց Անգլիայի վիթխարի գործարանների մէջ: Այդ կապիտալը գերազանցապէս արդիւնաբերող կապիտալ է և ոչ թէ վաշխառուական կամ առևտրական:

Երբ աշխատանքի արդիւնաւէտութեան աստիճանը շատ բարձր է, կապիտալիստի շահն էլ մեծ է. և այդ շահի միջոցով է, որ նա դիզում է իր ահեղի հարըստութիւնները, որոնք իրենց հերթին դառնում են կապիտալ, մտնելով արդիւնաբերութեան մէջ և ընդարձակելով արդիւնաբերութիւնը:

Եւ քանի որ Անգլիայի հարստութեան մեծագոյն մասը նրա արդիւնաբերական կապիտալն ու նրա արտադրութեան միջոցներն են, սոցիալիստական յեղա-

չըջման դէպքում այդ կապիտալն ու արտադրութեան այդ միջոցներն են, որ պիտի ենթարկեն պետականացման, սօցիալիզացիայի :

Այդ դէպքում որեւէ տնտեսական փոփոխութիւն կ'մտցնուի :

Բնաւ :

Փոփոխութիւնը կ'լինի սօցիալական և իրաւական : Կապիտալիստական դասը կ'որցնում է իր կապիտալը և զրկւում է հնարաւորութիւնից շարունակելու աշխատանքի շահագործումը : Կապիտալը, արտադրութեան բոլոր միջոցները դառնում են պետութեան սեփականութիւն, և աշխատաւորն իր վաստակը ստանում է ամբողջութեամբ, ու ոչ մի յաւելեալ աշխատանք չի մտնում այլևս կապիտալիստի գրպանը՝ իբրեւ շահ : Արտադրութեան միջոցները այժմ արդէն ծառայում են ամբողջ աշխատաւորութեան և ոչ թէ միայն մի փոքրաթիւ շահագործող դասի :

Այսպիսի մի յեղաշրջում Անգլիայի պէս մի խոշոր կապիտալիստական երկրում իսկապէս կարող է ձեռնտու լինել բանւորական մեծամասնութեան համար : Տնտեսական վիթխարի մեքենան, մի շարք բարեփոխումներով, կը շարունակէ գործել և, մի փոքր դասի անչափելի հարստացման փոխարէն, հաւասարապէս կ'հարստանայ և կապահովւի ամբողջ աշխատաւոր ժողովուրդը, անհամեմատ աւելի արդիւնաւէտ կերպով, քան մինչ այդ, որովհետեւ նա այժմ պիտի ստանայ իր ամբողջ վաստակը :

VI

ԲՕԼՇԵՒԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Վերցնենք այժմ Հայաստանը և տեսնենք, թէ ի՞նչ տնտեսական հետեւանքներ կարող է տալ սօցիալիս-

տական հասարակարգի անմիջական հաստատման փորձը մեր երկրում:

Հայաստանում արդիւնաբերական խոշոր կապիտալ չկայ բնաւ:

Հայ ժողովուրդը եթէ ունի մի փոքրաթիւ կապիտալիստական դաս, նա էլ գտնւում է Հայաստանի սահմաններից դուրս՝ Վրաստանում, Ադրբէյջանում, Ռուսաստանում, Պօլսում, Իզմիրում, Եգիպտոսում և այլուր: Այդ դասը սեփականազուրկ անել մենք չենք կարող. հետևաբար չենք կարող խլել նրանց ձեռքից նրա արտադրութեան մեծարժէք միջոցները:

Իսկ Հայաստանի ներսում եղած կապիտալը վաշխառուական է և առևտրական գերազանցապէս: Այդ կապիտալը—ապրանքներ, դրամ—մեծ չէ, և հեշտ է յափշտակել այն, բայց աւելի ևս հեշտ է սպառել այն:

Սակայն ի՞նչ կշահի դրանից մեր աշխատաւորութիւնը և մեր երկիրը:

Ռուսաստանի բօլշևիկեան փորձը ցոյց տւեց, որ պատրաստի ապրանքներն ու մասնաւոր մարդկանց մօտ եղած դրամը, սօցիալիզացիայի դէպքում, ընկնում է այն մարդկանց ձեռքը, որոնք զէնք ունեն և ճարպիկ ու աւագակ են: Իսկ մնացած չնչին մասն էլ հալւում է զանազան «սօվետական» կոչւած խանութներում:

Հետևաբար ի՞նչ պիտի ընկնի հայ աշխատաւորութեան ձեռքը: Գիւղերում—ոչինչ: Իսկ քաղաքներում շատ և շատ չնչին բան, որ նա կսպառէ ամենաշատը մէկ ամսւայ ընթացքում:

Յետո՞յ: Յետոյ—նրա դրութիւնն աւելի ևս կը վատթարանայ և նոյն իսկ անյուսալի կդառնայ: Ինչո՞ւ: Որովհետև մեր երկրում չկայ արգիւնաբերական կապիտալ, որ կարելի լինէր սօցիալիզացիայի ենթարկել և որի միջոցով հնարաւոր լինէր հիմնապէս բարելաւել, բարձրացնել աշխատաւորութեան տնտեսա-

կան վիճակը ու ստեղծել իսկապէս սօցիալիստական կարգեր։ Տնտեսական տեսակէտով մենք առնւազը մէկ երկու դար յետ ենք մնացել ժամանակակից Անգլիայից։

Մեր երկիրը ոչ միայն զուրկ է սօցիալիստական տնտեսակարգի գլխաւոր նախապայմանից՝ արգիւնաբերական կապիտալից, այլ նա շունի նոյն իսկ բաւականաչափ դրամագլուխ, որպէսզի իր սեփական միջոցներով վերականգնի աւերւած տնտեսութիւնները, ոտքի կանգնեցնի հարիւր հազարաւոր գաղթականներին, որոնք՝ թալանւած ու անօթի՝ սպասում են այն երջանիկ օրւան, երբ հնարաւորութիւն կստանար վերադառնալ իրենց բնակավայրերը։ Եւ որպէսզի կարելի լինի այդ ընչազուրկ գիւղացիական մասսաները վերաբնակեցնել իրենց տեղերում և ստեղծել նրանց համար տնտեսութիւն, պէտք է ամենից առաջ ունենալ մեծ դրամագլուխ։

Եթէ Հայաստանում լինի «սովետական» կոչւած բօլշևիկեան իշխանութիւն, որը իբր թէ պիտի ստեղծէ անյապաղ «սօցիալիստական դրախտ», ի՞նչ միջոցներով նա պիտի կարողանայ լուծել մեր երկրի ամենացաւոտ հարցերից մէկը—գաղթականական հարցը։ Ո՞վ է տալու հայ բօլշևիկներին այն հսկայական դրամագլուխը, որով նրանք կարողանան պահել գաղթականներին, որբերին, հնարաւորութեան դէպքում, տեղափոխել իրենց բնակավայրերն և վերականգնել նրանց աւերւած տնտեսութիւնը։ Ո՞րտեղից պիտի գտնեն մեր տնաբոյս բօլշևիկներն այն մեծ կապիտալը, որով նրանք ի վիճակի լինեն ձեռք բերել մեր քայքայւած գիւղացիութեան համար լծկաններ, գիւղատնտեսական գործիքներ և այլն։ Արդէն ամերիկական յանձնախումբը, որ եկել էր մեծ գումարով Ալէքսանդրապօլի շրջանը հայ գիւղացիների համար լծկաններ գնելու համար, բօլշևիկեան խլրտումներից

յետոյ մեկնել է Հայաստանի սահմաններէն, յայտնելով որ լծկաններ չի գնի, որովհետեւ չի կամենում, որ այդ լծկաններն ընկնեն բօլշեւիկների ձեռքը:

Որտեղից պիտի ստանան հայ բօլշեւիկ կոչւածները այն խոշոր կապիտալը, որով կարելի լինի կարգի բերել մեր քայքայւած հաղորդակցութեան միջոցները. մեզ պէտք են շոգեկառքեր, վագօններ, ատոմօթիլներ, ռեւսներ և այլն, մեզ պէտք են այդ բոլորը ոչ միայն եղած ճանապարհները վերականգնելու եւ բաւարար վիճակի մէջ դնելու համար. այլ մեզ պէտք են այդ բոլորը նոր երկաթուղիներ շինելու, նոր ճանապարհներ անցկացնելու համար:

Առանց հաղորդակցութեան միջոցների բարելաւման անհնար պիտի լինի վերաշինել մեր աւերւած երկիրը, մեր քայքայւած տնտեսութիւնները:

Բօլշեւիկները պիտի խաբեն ձեզ ասելով, թէ ամեն ինչ, որ պէտք է հայ ժողովրդին եւ Հայաստանին, կարող է տալ եւ կտայ Ռուսաստանը: Բայց բօլշեւիկեան Ռուսաստանը, եթէ ի վիճակի լինէր որեւէ բան մեզ տալու, ամենից առաջ իր հիւանդ գլխի ճարը պիտի տեսնէր: Մենք գիտենք, որ բօլշեւիկեան Ռուսաստանը նոյնքան կարօտ է բուժման եւ խընամքի, որքան եւ Հայաստանը: Նա ոչ միայն չի կարող տալ մեզ արտադրութեան միջոցներ, այլ եւ հաց, որով այնքան հարուստ էր նա առաջ եւ որի պակասութիւնից այնքան նա տառապում է այսօր: Մենք գիտենք, որ բօլշեւիկեան Ռուսաստանը սովից է մեռնում այսօր:

Սպասել օգնութիւն մի, թէկուզ, շատ ընդարձակածաւալ պետութիւնից, որ ինքը դրսի օգնութեան աղաղակող կարիք է զգում, նշանակում է ապրել ցընորքներով կամ միամիտներին ու կոյրերին խաբելու համար ստել անամօթաբար:

Բօլշևիկեան Ռուսաստանը ուրիշ երկրներին միայն մի բան ունի տալու—իր վարակիչ թոյնը, իր ախտաւոր մտայնութիւնը, իր ազգակործան ցնորքը, իր վիժած սօցիալական փորձերը: Եւ այս բոլորից աւելան, սովի և համաճարակ հիւանդութեանց մահասարսուռ հոտն է փչում: Այս բոլորը մեզ խոստանում է կատարեալ բնաջնջում:

Եթէ բօլշևիկեան Ռուսաստանից բօլշևիկեան Հայաստանը ոչինչ չպիտի կարողանայ ստանալ, թերեւ լինի մէկ ուրիշ երկիր, որ ընդառաջ գնայ մեր մանկավիտ սօցիալիստական փրկիչներին, հայ բօլշևիկներին: Կապիտալիստական բոլոր երկիրներին համար բօլշևիզմը հաւասարազօր է ժանդախտին: Այն երկիրը, որ բռնւած է այդ սարսափելի հիւանդութեամբ, անմիջապէս կտրւում է ամբողջ աշխարհից, որպէսզի չըկարողանայ վարակել ուրիշ առողջ երկիրները: Այդպէս վարւեցին Ռուսաստանի հետ, այդպէս էլ անկասկած կվարւին Հայաստանի հետ:

Այն միակ կապիտալիստական հզօր պետութիւնը, որ իր առատ օգնութեամբ փրկեց մեզ սովից, նա ևս պիտի դադարի Հայաստան որեւէ մթերք ուղարկելուց: Բօլշևիկեան անկարգութեանց ուրւականն անգամ ըստիպեց Ամերիկայի ներկայացուցիչներին շտապել թողնելու մեր երկրի սահմանները: Երևակայում էք, թէ ի՞նչ պիտի լինէր, երբ իրօք այստեղ բօլշևիկեան յեղաշրջում կատարւէր: Այլևս ոչ մի ամերիկացի չէր մնայ այստեղ և ոչ մի փութ ալիւր չպիտի գար: Ողորմելի բօլշևիկ կօմիսարները կարծել են, թէ ապահովում են իրօք Հայաստանի հացը, երբ բռնի ուժով ստորագրութիւն են վերցրել Ալէքսանդրապօլում մեր երկրից հեռացող ամերիկացի պաշտօնեաներից ու տիկիներէից. հաւատացել են կամ կամեցել են հաւատացընել, թէ Ամերիկան պիտի շարունակէ հաց ուղարկել

Հայաստանին, եթէ նոյնիսկ բօլշևիկեան իշխանութիւն լինի Հայաստանում:

Զգիտես ի՞նչ կայ այստեղ աւելի—միամտութիւն թէ նենգամիտ խուժանավարութիւն, ի՞րենք են յիմար թէ ուրիշներին են կամենում յիմարացնել, խաբել:

Պէտք է մանուկ լինել չհասկանալու համար, թէ մի ստորագրած պաշտօնեայի ստորագրութիւնը այնպիսի խոստման տակ, որի տակը նրա լիազօրութիւնից չատ վեր է, ոչ մի արժէք չունի իր բարձր իշխանութեան համար: Այդպիսի ստորագրութիւնից, այն էլ սպառնալիքի տակ տրւած, ոչ մի պարտաւորութիւն չի կարող ծագել:

Այսպիսով բօլշևիկեան իշխանութիւնը մեր երկրում ոչ միայն անխուսափելիօրէն մահացու հարւած պիտի հասցնէ մեր ժողովրդի տնտեսութեան, այլ և պիտի զրկէ մեր ժողովուրդը և այն հացից, որ նա ստանում էր մինչև այսօր Ամերիկայից:

Այս կլինի տնտեսական անմիջական հետեւանքը բօլշևիկեան «սօցիալիստական» լաւանտիւրայի Հայաստանում: Իսկ թէ ի՞նչ կլինեն մի այդպիսի յանցաւոր լաւանտիւրայի սօցիալական և քաղաքական հետեւանքները, դրա մասին յաջորդ գլուխներում:

VII

ԲՕԼՇԵՒԻԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Սօցիալիստական յեղաշրջում նշանակում է ընդհանուր սեփականազրկում յօգուտ պետութեան կամ համայնքի: Ոչ միայն արտադրութեան միջոցները, այլ և տները, խանութները, ապրանքները, և ամբողջ մասնաւոր սեփականութիւնը պիտի դառնայ պետական կամ համայնական սեփականութիւն: Դասակար-

գերը պիտի վերացեն, և ամբողջ ժողովուրդը պիտի հաւասարւի սօցիալապէս, կազմելով աշխատաւորական մի բանակ: Բոլորի աշխատանքի արդիւնքը պիտի պատկանէ պետութեան կամ համայքին, և ամեն մի քաղաքացի աշխատաւոր իր վարձը պիտի ստանայ պետութիւնից կամ համայնքից:

Մինք տեսանք, որ մի այդպիսի յեղաշրջում ներկայումս Հայաստանում տնտեսական տեսակէտով ոչ միայն չի կարող տալ որեւէ դրական արդիւնք, այլ ընդհակառակը կունենայ ամենավատթար հետեւանքները: Մեր ժողովրդի աշխատանքի արդիւնաւէտութեան աստիճանը այնքան է ցածր, մեր ժողովրդի արտադրութեան միջոցներն այնքան են պրիմիտիւ, նախնական, որ նա չի կարող ունէ բան շահել համայնացումից, սօցիալիզացիայից: Ոչ մի պետական իշխանութիւն ի վիճակի չէ, վերելից հրամաններ արձակելով, հիմնովին շրջել մի ամբողջ ժողովրդի տնտեսական կեանքը և բոլորովին նոր տնտեսակարգ «տեղծել եթէ այդ չի բղխում երկրի տնտեսական զարգացման ներքին անհրաժեշտութիւնից:

Տնտեսական աշխարհն ունի իր սեփական օրէնքները և իր ներքին անխուսափելի ընթացքը: Բռնութիւնը, թէկուզ այդ բռնութիւնը կատարւի պետական իշխանութեան միջոցով, ի վիճակի չէ տեական օրէն և հիմնականօրէն շեղելու տնտեսութիւնը իր բնականոն զարգացման ուղիից: Նահապետական տնտեսութեամբ ապրող ժողովուրդը չի կարող մի անգամից թռչել՝ հասնել սօցիալիստական տնտեսութեան՝ առանց անցնելու կապիտալիստական խոշոր տնտեսութեան բովից:

Մի ժամանակ Ռուսաստանում նարոդնիկներն էին, որ ունէին այն միամիտ հաւատը, թէ այդ կարելի է: Բայց այժմ նրանց ժառանգորդ ուսու էսէրներն անգամ

հրաժարւել են այդպիսի խաւ մտքերից: Եւ միայն բօլշևիկներն են, որ մարքսիզմից յետ նահանջելով՝ իւրացրել են նարօդնիկների հնամաշ գաղափարները և ծախում են աշխարհին որպէս նոր մտքեր:

Ռուսաստանի «սօցիալիստական» յեղաշրջման փորձըն ակնյայտօրէն ցոյց տւեց, որ սօցիալիզացիայի վաղաժամ իրագործումը յետ է մղում երկրի տնտեսութիւնը դէպի նախնական ձևերը և ընդհանուր քայքայում առաջնում:

Մի այդպիսի փորձ Հայաստանում անհամեմատ աւելի աղէտաւոր հետեանքներ պիտի տայ անտարակուսելիօրէն:

Մենք վերլուծեցինք սօցիալիստական յեղաշրջման փորձի տնտեսական հետեանքներն արդի Հայաստանում: Այժմ անցնենք սօցիալական եւ քաղաքական հետեանքներին:

Մեր երկրում չկան խոշոր արդիւնաբերական, դասակարգեր, կան սպեկուլիանտներ, վաշխառուներ և առևտրականներ:

Սպեկուլիացիան և սպեկուլիանտները ծնունդ են արտակարգ ժամանակի և արտակարգ պայմանների: Համաշխարհային պատերազմի հետեանքով անհրաժեշտ մթերքների և ապրանքների արտադրութիւնը չափազանց պակասել է: Չափազանց դժւարացել է նաև փոխադրութեան գործը: Փչացել են նաւերը, փչացել են երկաթուղիները, պակասել են ձիերը, անասունները: Այդ բոլորի վերականգնումը պահանջում է երկար ժամանակ: Տասնեակ միլիոնաւոր մարդիկ տառիներ շարունակ ոչինչ չեն արտադրել, այլ միայն սպառել են: Մթերքների և ապրանքների այն վիթխարի պաշարը, որ ստեղծւել էր երկար ժամանակի անդուլ աշխատանքով ամբողջ աշխարհում, այլևս չկայ: Մինչդեռ պահանջը չի նւազել, իսկ առաջարկը պակասել է:

շատ մեծ չափով : Ամենուրեք զգացւում է մթերքներ-
ի , ապրանքների այնպիսի մեծ կարիք , որ մեծապէս
նպաստում է գների բարձրացման : Այդ տեսակէտով
Հայաստանը գտնւում է ամենադժբաղդ պայմանների
մէջ : Պահանջի և առաջարկի փոխ յարաբերութիւնը
անհամեմատ աւելի աճնպաստ է այստեղ , քան մի որ-
ևէ այլ երկրում :

Այսպիսի արտակարգ պայմաններն անխուսափե-
լիօրէն առաջ են բերում սպեկուլիացիան և սպեկու-
լիատիւ կապիտալը :

Ռուսաստանում բօլշևիկները որոշեցին արմատա-
խիլ անել այդ երևոյթը , ոչնչացնել չարաշահերի (սպե-
կուլիանտների) դասը : Ճիշտ է , նրանց յաջողւեց շատ
և շատ սպեկուլիանտներ ոչնչացնել Ֆիզիքապէս , շա-
տերից խել նրանց դրամագլուխները , ապրանքները
և զրկել սպեկուլիացիա անելու հնարաւորութիւնից ,
սակայն սպեկուլիացիան , որպէս տնտեսական երևոյթ ,
չարիք , չվերացաւ : Որովհետև բօլշևիկների ձեռք ա-
ռած միջոցների հետևանքով ազատ սպեկուլիացիան
դարձաւ միայն գաղտնի և աւելի հրէշաւոր : Սպեկու-
լիացիայով սկսեցին պարապել բոլոր նրանք , որ ապ-
րուստի ուրիշ միջոց չունէին : Խոշոր սպեկուլիացիան
վերացաւ , բայց մնաց և աճեց մանր , սօցիալապէս ա-
ւելի ծաւալուն սպեկուլիացիան , որ աւելի մեծ չարիք
դառաւ ժողովրդի գլխին :

Սպեկուլիացիան մի առ ժամանակ կարելի է մեղ-
մել , սպեկուլիանտներին կարելի է պատժելով զսպել :
Բայց սպեկուլիացիան արմատախիլ անել հնարաւոր է
միայն այն ժամանակ , երբ մթերքների , ապրանքների
բացակայութիւնը կամ պակասութիւնը շուկայում կը
վերանայ բոլորովին : Այդ էր պատճառը , որ բօլշևիկ-
ներին չյաջողւեց Ռուսաստանում վերացնել սպեկու-
լիացիան և սպեկուլիանտների դասը , չնայելով նրանց

ձեռք առած դրակոնական միջոցներին : Հարկաւ նոյնը պիտի լինի և Հայաստանում :

Վաշխառութիւնը եւ վաշխառու դասը նոյնպէս հիմնովին կարելի կ'լինի վերացնել միայն այն ժամանակ, երբ դրամի պակասութիւնից նեղւող աշխատաւոր մարդիկ հնարաւորութիւն կունենան վարկ ստանալու աւելի ձեռնտու պայմաններով, երբ ինքը պետութիւնն այնքան շատ ազատ դրամ կունենայ, որ ի վիճակի կ'լինի այդ վարկը տալու կարիք ունեցող աշխատաւորներին : Բօլշևիկեան իշխանութիւնը չի կարող այդքան դրամագլուխ ստանալ երկրի ներսից, որպէսզի ի վիճակի լինի բաւարարել աշխատաւորութեան կարիքը դրամի նկատմամբ. բայց նա չպիտի կարողանայ նաեւ դրամագլուխ ձեռք բերել դրսից, օտար պետութիւններից այդ նպատակի համար : Ուրեմըն վաշխառուներն էլ կ'մնան, թէեւ կարող է փոխւել նրանց անձնական կազմը. կիրակոսը կ'թալանւի, կըսպանւի, բայց վաշխառու կդառնայ Մարկոսը՝ կիրակոսին թալանողը կամ սպանողը, ինչպէս այդ մենք տեսնում ենք այսօր բօլշևիկեան Ռուսաստանում :

Դառնանք այժմ առևտրին ու առևտրականներին :

Առևտուրը ներկայումս, շնորհիւ ապրանքների շատ մեծ պակասութեան և թղթադրամի արժէքի յարաճուն անկման, առհասարակ ստացել է սպեկուլիատիւ բնոյթ : Դժւար է, և ես պիտի պնդեմ նոյնիսկ, անկարելի է ասել, թէ ո՞րտեղ է վերջանում առևտուրը և ո՞րտեղ սկսւում սպեկուլիացիան : Առևտրականն այսօր գրեթէ նոյն սպեկուլիանտն է :

Ինչ պիտի անի բօլշևիկեան իշխանութիւնը առևտրի և առևտրականների նկատմամբ : Պիտի գրաւի առևտրականներից նրանց բոլոր ապրանքներն ու խանութները և ինքը աշխատի իր սեփական խանութներըն ունենալ : Բայց նախ՝ մեր երկրում մասնաւոր

Մարտիկանց մօտ եղած ապրանքների քանակը շատ քիչ է։ Այդ քիչ էլ որոշ, զգալի մասը պիտի անհետանայ կամ հարկի ապրանքները գրաւելու և սովետական իւանութի իւանութեան ժամանակ, ինչպէս այդ եղանակով շեխիկեան Ռուսաստանում, — մի քան, որից հազիւ թէ աւելի լաւ կատարելի մեզ մօտ առեալի նայիծնալիւսացիւն (ազգայնացում — պետականացումը)։ Մնացած մասը վերջապէս պիտի երևան գայ բօլշևիկեան պետական իւանութեամբ և ծախելի, սպառելի շատ ու շատ կարճ ժամանակում։

Իսկ երբ ծախեցաւ, վերջացաւ ապրանքը, ո՞րտեղից և ինչպէս մեր երկիրն ապրանք պիտի հասցընեն մեր տնտեսութեան բօլշևիկները։

Բօլշևիկեան իշխանութիւնը չի ունենայ խոշոր գրամագլխի իր տրամագրութեան տակ, որպէսզի կարողանայ այդ գրամագլխով ապրանք ձեռք բերել տրամադրամանում։ Իր գրաւած ու ծախած ապրանքի գինըն այնքան չնչին պիտի լինի, որ նրանով անկտրելի կլինի երկրի ապրանքային փոխանակութիւնը կատարել բաւարար չափով ու եղանակով։

Ռուսաստանից չի կարելի ունենալ որեւէ սպասելիք, նա ինքն ապրանքների և գրամագլխի անհուն կարիք ունի։ Կապիտալիստական արտասահմանը բօլշևիկեան իշխանութեան դրամ չի տայ և չի վստահանայ։

Հետեալաբար, մասնաւոր առեւտուրը ոչնչացնելով, բօլշևիկներն իրենք էլ չպիտի կարողանան ապրանքներ հայթայթել ժողովրդին։ Եթէ պետութիւնը խափանում է մասնաւոր ձեռնարկութիւնները և իր վրա է վերցնում տնտեսական շատ կարեւոր ֆունկցիաներ, ինչպէս, օրինակ, ապրանքների հայթայթումն և բաշխումը, այդ դէպքում նա ոչ թէ թեթեւացնում է աշխատաւոր ժողովրդի վիճակը, այլ, ընդհակառակը,

չառ դժւարացնում : Որովհետեւ նա ի վիճակի չէ սահմանափակել ժողովրդի պահանջը այն չափով, որ ինքը կարող է բաւարարել : Ժողովրդի պահանջը ազատակող է և այնքան կենսական, որ նա ամեն միջոցի կգիմէ, որպէսզի ապօրինի ճանապարհներով իր կարիքին գահացում տայ : Այդ հողի վրա է, որ ծագում է և ծագկում գաղտնի առեւտուրը բօլշևիկեան Ռուսաստանում և ընդունում հրէշային չափեր :

Նոյնն անտարակոյս պիտի լինի և մեղանում :

Ուրիշ խօսքով այն առեւտրական դասը, որ գոյութիւն ունի այժմ, կը վերանայ, ենթարկւելով էկսպրօպրիացիայի, սեփականազրկման : Իսկ նրա տեղ հանդէս կգայ մի ուրիշ առեւտրական դաս, որը կը տարբերուի առաջնից իր անձնական կազմով միայն : Եւ այդ դասի մեծամասնութիւնը կգոյանայ գողերից ու թաւանչիներից գերազանցապէս : Այդ նոր դասը կը լինի աւելի յանդուգն անչափաւոր եւ աւելի չարաշահ :

Մեր գիւղացիութիւնը, որ կարողացել է վերջին տարիների կռիւներից ու տեղահանութիւններից յետոյ պահպանել իր փոքրիկ նահապետական տնտեսութիւնը, բօլշևիկների օրով պիտի զրկուի և այն սերմացւեց, հացից, երկրագործական գործիքներից եւ լծկաններից, որ նա ստանում է այժմ կառավարութիւնից : Որովհետեւ բօլշևիկները դրանցից և ոչ մէկը չպիտի կարողանան դրսից բերել — ոչ Ռուսաստանից, ոչ էլ որեւէ այլ պետութիւնից :

Մեր գաղթականները պիտի զրկուին, բօլշևիկների իշխանութեան ժամանակ այն բոլոր թէ պետական և թէ մանաւանդ ամերիկեան նպաստներից, որ մինչև այժմ նրանք ստանում են : Եւ նրանք կամ պէտք է սովամահ լինեն, կամ նորից պիտի գաղթեն օտար երկրներ՝ իրենց գլխի ճարը տեսնելու համար :

Մեր ինտելիգենցիան, որ այնքան մեծ դժւարութիւններով է գալիս Հայաստան, կամ այլևս չի վերագառնայ իր հայրենիքը կամ, եթէ վերադարձել է, նորից կերթայ օտար երկիրներ: Որովհետեւ նա երբէք չպիտի կարողանայ տանել ազատ մտքի և ստեղծագործութեան այն խեղդող մթնոլորտը, որ միշտ և ամենուրեք ստեղծում են իրենց շուրջը բօլշևիկները: Որովհետեւ այնտեղ, ուր իշխում են բօլշևիկները, այլևս ոչ մի այլ հասարակական հոսանք չի կարող գոյութիւն ունենալ. ով բօլշևիկ չէ, նա ենթակայ է հալածանքի: Այսպէս է բօլշևիկեան Ռուսիայում, այսպէս կլինի և մեզանում:

Մեր խոշոր կապիտալիստական դասը, որ ապրում է Հայաստանի սահմաններից դուրս և որ իր կապիտալով կարող է բեղմնաւորել, կենդանացնել մեր երկրի տնտեսական կեանքը, միանգամայն պիտի հրաժարւի բօլշևիկեան Հայաստանից: Նա, որ այսօր հազիւ է հաշտւում դաշնակցական իշխանութեան հետ, վաղը, եթէ բօլշևիկները տիրող դառնան, կփախչի հեռու, շատ հեռու Հայաստանի սահմաններից:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ բօլշևիկեան յեղաշրջումը չի կարող խոստանալ մեր դժբախտ երկրին դրական հետեանքներ նաև սօցիալական տեսակէտով: Ի վիճակի չլինելով Հայաստանի տնտեսական սիստեմի մէջ հիմնական բարեփոխութիւն մտցնել նա չպիտի կարողանայ նաև հիմնովին փոխել մեր երկրի սօցիալական յարաբերութիւնները, պիտի ձգտի ոչնչացնել հին իշխող դասակարգերը միայն նրա համար, որ առաջ բերէ նորերը, որոնք հներից կը տարբերւեն իրենց անձնական կազմով, բայց կը լինեն շատ աւելի մեծ չարիք աշխատաւոր ժողովրդի գլխին, քան անգամ հները:

Գանք այժմ քաղաքական հետեանքներին:

VIII

ԲՕԼՇԵԻԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Հայաստանը գտնուում է այն մեծ ճանապարհների վրա, որոնք տանում են Եւրոպայից դէպի Ասիա, դէպի Մերձաւոր և Միջին Արևելք: Իր ռազմական դիրքով նա իշխում է ամբողջ Փոքր Ասիայի վրա:

Այն մեծ պետութիւնը, որի ազդեցութեան շրջանի մէջ կընկնի Հայաստանը, ի վիճակի կլինի սպառնալու Անգլիայի ամենակենսական շահերին, ամենախոցելի կէտերին՝ Սուէզի ջրանցքին ու Եգիպտոսին, Միջագետքին ու Պարսկաստանին և, որը ամենակարեւորն է, Հնդկաստանին:

Հին, ցարերի Ռուսաստանն այդ տեսակէտով եղել է Անգլիայի ամենաոխերիմ ու վտանգաւոր թշնամին, բացի 1907—1917 թ. թ. շրջանից, երբ մի աւելի հզօր թշնամու՝ Գերմանիայի սպառնալիքի տակ՝ անգլո-ռուս հակամարտութիւնը կորցրեց ժամանակաւորապէս իր սրութիւնը և վերածւեց անգլո-ռուս համաձայնութեան:

Կնքելով ռազմական ու քաղաքական դաշն Ռուսաստանի հետ և պատերազմի բռնւելով Գերմանիայի հետ, Անգլիան սակայն երբէք չմոռացաւ իր շահերն Արևելքում և ամեն ջանք թափեց, որ համաշխարհային պատերազմից իր ախոյան Ռուսաստանը դուրս չգայ զօրացած: Ժամանակը հասած չէ տակաւին ճշտելու հանգամօրէն այն բաղդորոշ՝ դերը, որ Անգլիան կատարեց այդ ուղղութեամբ (Ռուսաստանի քաղաքական կեանքում, պատերազմի սկիզբից մինչև այսօր: Բայց մի բան անտարակուսելի է թւում այժմ իսկ—այն է, որ առանց Անգլիայի «օգնութեան» հազիւ թէ Ռուսաստանն ընկնէր իր ներկայ ողբալի վիճակի մէջ:

Բօլշևիկեան Ռուսաստանի այսօրւայ կռիւը Անգլիայի դէմ ոչ թէ մի նոր երևոյթ է (բաղխում համաշխարհային պրօլետարիատի, որ իբր թէ ռուս բօլշևիկներն են ներկայացնում, և համաշխարհային իմպերիալիզմի միջև, ինչպէս շատ միամիտներ կարծում են և մեզանում), այլ մի շատ հին իրողութիւն: Եւ այդ իրողութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ ռուսական իմպերիալիզմի և անգլիական իմպերիալիզմի հակամարտութիւնը: Ուրիշ խօսքով, բօլշևիկեան Ռուսաստանը շարունակում է ցարերի վաղեմի քաղաքականութիւնը Անգլիայի դէմ: Այն տարբերութեամբ միայն, որ ներկայումս դերերը փոխւած են: Առաջ Անգլիան էր որ թէ ու թիկունք էր տալիս մեռնող Թիւրքիային, պաշտպանում այն՝ ռուսական իմպերիալիզմի հարւածներէն ու դաւերից: Իսկ այսօր բօլշևիկեան Ռուսաստանն է, որ ձգտում է պահպանել մահաւան գատապարտւած տաճկական կայսրութիւնը և վերջինիս ոյժ տալու միջոցով՝ աշխատում է ի դերեւ հանել Անգլիայի իմպերիալիստական ծրագրները Արեւելքում:

Այսպիսով բօլշևիկեան Ռուսաստանը, որ իր ազգային կռիւը Անգլիայի դէմ քողարկում է ինչ որ «համաշխարհային», եւ «պրօլետարական» ֆրազներով ու նշանաբաններով, իրօք իր հերթին իմպերիալիստական մի պայքար է մղում անգլիական իմպերիալիզմի դէմ: Ռուսական բօլշևիզմը այսօր ռուսական ուժասպառ ու ջախջախւած իմպերիալիզմի մի նոր ձևն է, որով նա կամենում է խաբել, մոլորեցնել իր հւօտար ժողովրդական զանգւածները՝ աւելի յաջողութեամբ հետապնդել կարենալու համար իր մութ նպատակները:

Ազգերի եւ պետութեանց պատմութիւններն իրենց ներքին տրամաբանութիւնն, իրենց ներքին մը-

դռններն ունին : Խելագար են այն մարդիկ եւ խըմ-
բակցութիւնները , որոնք իրենց ողորմելի ոյժով եւ
ցանկութիւններով կամենում են շրջել պատմութեան
անիւը եւ տիրաբար ազգել իրենց ազգի պատմական
ընթացքի վրա : Իշխանաւորները չեն որ իրենց քմա-
հաճոյքով որոշում են իրենց ազգի ու պետութեան
քաղաքական ուղին , այլ երկրի աշխարհագրական դիր-
քը , նրա տնտեսական վիճակն ու պահանջները , ժո-
ղովրդի առանձնայատկութիւններն ու հոգեբանութիւ-
նը , որ դարբնել է դարերի ընթացքում , նրա կուլ-
տուրայի եւ տօնիկայի աստիճանը եւ մի շարք այլ ա-
ռարկայական պայմանները : Լինա այս ազգականներն են ,
որ իրենց աւիրական գրոշմն են դնում այն բոլոր ան-
հատների քաղաքականութեան վրա , որոնք ցնորական
յանդգնութիւնն ունին իրենց սեփական քմահաճոյքով
ու գաղափարներով դուրս գալու իրենց պետութեան
եւ ազգերի պատմութեան կենսական շահերի ու պա-
հանջների դէմ :

Եթէ Լենինն ու իր համախոհները հրապարակ ե-
կան թերեւս շատ տարբեր ձգտումներով ու նպատակ-
ներով , քան այն , որ նրանք հետապնդում են այսօր ,
այժմ արդէն պարզ է միանգամայն , որ « չ թէ նրանք
են հարկադրել Ռուսաստանը որդեգրելու իրենց « հա-
մաշխարհային » « սօցիալիստական » , « բարձր » նպա-
տակները , այլ ընդհակառակը , Ռուսաստանն է , որ
ստիպել է նրանց « սօցիալիստական » նպատակների մէջ
դնել բոլորովին այլ բովանդակութիւն , ուսական
ազգային իմպերիալիստական բովանդակութիւն :

Ռուսաստանի պատմութիւնը այսօր բոլշևիկների
ձեռքով է ձգտում իրագործել իր ազգային նպատակ-
ները :

Նկատի ունենալով Ռուսաստանի ներքին տնտե-
սական կատաստրոֆիկ վիճակը եւ նրա միանգամայն

խախտւած միջազգային դիրքը, կարելի է անվերապահօրէն պնդել, որ Ռուսաստանի ներկայ մղումը դէպէն Արեւելք ուրիշ բան չէ, եթէ ոչ յուսահատական ջղածգութիւն, որ բղխում է կատարեալ անզօրութիւնից՝ խոցելու իր ամենամեծ ախոյեանին՝ Անգլիային:

Անգլիան, իր իմպերիալիստական մեծ ծրագրների իրագործումն անպայմանօրէն ապահովելու համար, հրամայական պէտք ունի ստեղծելու Հայաստանը, մի անգամ ընդմիջտ ազատելու այն՝ ռուսական լուծից ու ոտնձգութիւններից և իր ազդեցութեան շրջանի մէջ գցելու այն: Անգլիական տեսակէտով Հայաստանը վստահելի կլինի միայն այն ժամանակ, երբ հեռու կը լինի ռուսական ազդեցութիւններից ու դաւերից: Աւելին. նա պէտք է լինի հակառուսական: Այլապէս նա միշտ կասկածի տակ կմնայ: Այդ պարագային Անգլիան միշտ ի վիճակի կլինի դժւարութիւններ և անախորժութիւններ պատճառելու Հայաստանին: Ռուսական ամեն մի միջամտութիւն հայկական գործերին, հայկական ամեն մի հակում դէպի ռուսները՝ անխուսափելիօրէն կործանարար կերպով պիտի անդրադառնայ Հայաստանի քաղաքական բաղդի վրա:

Գնահատութեան առնելով միջազգային ոյժերի փոխ-յարարերութիւնն ու զօրութիւնը ներկայումս, առանց որեւէ տատանումի մենք մի անգամ ընդմիջտ պիտի պարզենք մեզ համար, որ մեր քաղաքական բաղդի վերջնական որոշումը գերազանցապէս, եթէ չասեմ բացառապէս, կախւած է Անգլիայից: Ռուսաստանի դերը Մերձաւոր Արեւելքում և մասնաւորապէս Հայաստանում վերջացած պէտք է համարել: Անգլիան կաշկանդել, շղթայել է Հիւսիսի մեծ պետութիւնն այնպէս, որ նա երկար ժամանակ չպիտի կարողանայ այլևս որեւէ կշիռ ու ձայն ունենալ Արեւելքում: Անգ-

լիայի արևելեան քաղաքականութեան գլխաւոր նպատակներէց մէկն էլ այս պահիս այն է, որ Ռուսաստանը թէ ռազմապէս և թէ քաղաքականապէս սանձահարւի առմիշտ և այլևս միանգամայն անվտանգ դառնայ Անգլիայի համար: Այդ նպատակի համար է, որ նա ստեղծուի է Մերձքալթեան պետութիւններ, հզօր լեհաստան, Ուկրայնա, անդրկովկասեան ու թերևս և կովկասեան պետութիւններ: Այդ նպատակի համար է, որ Ռուսաստանը ուժասպառ է տրւում:

Բայց Ռուսաստանն այսպէս թէ այնպէս մի մեծ պետութիւն է, որ ապագային կարող է վերստին դառնալ մի ահարկու, սպառնական ոյժ Անգլիայի հանդէպ:

Եւ այսօրւայ վիճակը չէ որ մտահոգիչ է Անգլիայի համար, այլ վաղւանը:

Պէտք է կանխել դէպքերը, պէտք է նախատեսել միջազգային ոյժերի վտանգաւոր դասաւորումները և համապատասխան նախազգուշական միջոցներ ձեռք առնել այժմէն իսկ: Այս է, որ ստիպում է անգլիական հեռատես քաղաքագէտներին մի այնպիսի հաշտութիւն կնքել Անգլիայի համար վտանգաւոր ոյժերի հետ, որպէսզի ստեղծուին, աճեն ու զօրանան այն ուժերը, որոնց միջոցով հնարաւոր լինի պահպանել քաղաքական հաւասարակշռութիւնը ապագայում:

Երեք մեծ վտանգաւոր ոյժեր կան, որ անխուսափելիօրէն պիտի դառնան Անգլիայի համար մի անխորտակելի վտանգ, եթէ թոյլ տրւի որ նրանք միանան, եթէ այժմէն իսկ նրանց միացման դէմ պատւարներ չկառուցւին: Այդ ոյժերն են՝ Գերմանիան, Ռուսաստանն և Թիւրքիան:

Այս երեք ոյժերի միացումը անկարելի, կամ անմիաս դարձնելու համար Անգլիան ամեն ճիգ է թափում մի կողմից՝ ուժասպառ անելու երեք պետու-

թիւնները թէ ռազմապէս, թէ տնտեսապէս և թէ քաղաքականապէս, միւս կողմից՝ շղթայելու նրանց նոր ազգային պետութեանց երկաթէ օղակով, որը ի վիճակի լինի կասեցնելու ամեն մի քաղաքական վըտանգ:

Գերմանիան արդէն օղակւած է այդպիսի պետութեանց շղթայով—Չեխո-Սլաւիա, Ռումանիա, Ուկրայնա, Լեհաստան, Լիտվա, Լատվիա, Էստօնիա:

Ռուսաստանը շղթայւում է Ֆինլանդիայով, Էստօնիայով, Լատվիայով, Լիտվայով, Լեհաստանով, Ուկրայնայով, Ռումանիայով, իսկ հարաւում անդըրկովկասեան ու թերեւ կովկասեան նոր պետութիւններով:

Տաճկաստանը շղթայւում է արաբիայով, Միջագետքով, Սիւրիայով, Յունաստանով, Հայաստանով, հաւանաբար Քիւրդստանով և վերջապէս մի շարք եւրոպական գաղութներով—Ֆրանսիական Կիլիկիայով, Իտալական Ադալիայով, փաստօրէն անգլիական Պօլսով ու նեղուցներով:

Այս քաղաքական հոյակապ կառուցւածքը արհեստական չէ բնաւ, այլ հիմնուած է, մի քանի ոչ էական շեղումներով, ազգային առողջ և կենսունակ ըսկզբունքի վրա: Նորակազմ բոլոր պետութիւններն էլ գերազանցապէս ազգային պետութիւններ են և բոլոր տւեալներն ունեն զարգանալու և զօրանալու: Այդ պետութիւններն են որ բաժանում են այսօր Գերմանիան Ռուսաստանից, Ռուսաստանը՝ Տաճկաստանից:

Հայաստանը այդ շղթայի օղակներից մէկն է, որ բաժանում է եւ բաժանելու է Ռուսաստանը Տաճկաստանից: Դաշնակից պետութեանց եւ առանձնապէս Անգլիայի համար, որ ստեղծում են Հայաստանը, հայկական պետութիւնը այն չափով արժէք կունենայ, որ

չափով վերջինս հակում չի ունենայ ոչ դէպի Տաճկաստանը, ոչ էլ դէպի Ռուսաստանը:

Երբէք չպէտք է մոռնալ, որ Հայաստանը չի ըստեղծւում յանուն արդարութեան կամ մարդասիրութեան, այլ միմիայն քաղաքական նպատակներով: Իսկ այդ քաղաքական նպատակն է ծառայել իբրեւ պատնէշ Ռուսաստանի եւ Տաճկաստանի կամ համառուսական եւ համիւլաւական շարժման միջեւ:

Այդ պատճառով Հայաստանը մի անգամ ընդմիջտ պէտք է դադարի գործիք լինելուց Ռուսաստանի ձեռքում: Ռուսական որ եւ է ապդեցութիւն չպէտք է լինի այլեւս Հայաստանի մէջ եւ Հայաստանի վրա:

Քաղաքական այն իւրայատուկ պայմաններում, որոնց մէջ կառուցւում է հայկական պետութիւնը, միջազգային ոյժերի փոխայարաբերութեան այն շրջանում, երբ վերջնականապէս ձեւաւորւում է Հայաստանի քաղաքական բաղդը, ոչինչ չկայ աւելի փաստակար եւ, ես կասեմ նոյնիսկ, կործանարար հայ ժողովրդի համար, քան այն կոյր եւ ստրկամիտ ուսաստիրութիւնը, որ այս կամ այն ձեւով երեւան է գալիս մեր քաղաքական կեանքում:

Վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում մեր բոլոր քաղաքական սխալների, սայթաքումների եւ յուսախաբութիւնների գլխաւոր պատճառը եղել է մեր ազգային մոլեգին ուսաստիրութիւնը եւ ուստի կան օրինատացիան, որ ահագին փաստներ է տւել մեզ, անգամ վերջին երկու տարիների մեր անկախ գոյութեան ժամանակ:

Եւ եթէ վրաստանն ու Ադրբէջանը, որոնց միջազգային դրութիւնը մեզանից շատ աւելի խախտւած եւ աննպաստ էր, կարողացան քաղաքական խոշոր նւաճումներ անել եւ մեզանից շատ աւելի ամրացնել

իրենց դիրքը, դրա գլխաւոր պատճառներէց մէկն էլ
այն էր, որ նրանք հակառուսական օրինաւորապէս ու-
նէին, — մի բան, որ միանգամայն համապատասխա-
նում էր դաշնակիցներէ եւ առանձապէս Անգլիայի
շահերին:

Մինչդեռ Հայաստանը կուրօրէն շարունակում էր
իր ռուսասիրական քաղաքականութիւնը, որ մեծամեծ
կասկածներ էր յարուցանում Անգլիայի ղեկավար շէր-
շաններում: Դրանից առաջ էր գալիս այն անվստա-
հութիւնը, որ ունէր Անգլիան դէպի մեր պետութիւ-
նը: Մեր տրամագրութիւններն ու հրապարակային
արտայայտութիւններն այնպէս էին, որ ակամայօրէն
տարակուսանք էին յարուցում դրսի աշխարհում, թէ
մենք իրօք ձգտում ենք որեւէ ձեւով միանալ կրկին
Ռուսաստանին: Ռուսական շորշփը չէր անցել մեր
վրայից, մենք բոլորս էլ հիւանդ էինք ռուսական
հիւանդութեամբ, մեր ազգային մտայնութիւնը կար-
ծես անգոր էր թօթափել իր ռուսական հովերը, մեր
ազգային կամքը չէր գտնում իր մէջ բաւականաչափ
վճռականութիւն մի անգամ ընդմիշտ կտրելու մեր
յոյսերը, մեր կապերը Ռուսաստանից:

Այդ բոլորն առաջ էր գալիս մասամբ այն բա-
նից, որ հարիւր տարւայ ռուսական տիրապետութիւ-
նը շատ ուժեղ դրոշմ է դրել մեր հոգու վրա: Մա-
սամբ էլ այն բանից, որ մինչեւ այսօր էլ մենք մեզ
պարզ հաշիւ չենք տալիս, թէ ինչ հսկայական յեղա-
շրջումներ են կատարւել միջազգային ոյժերի փոխա-
րաբերութեանց մէջ, թէ պարտւած, քայքայւած,
բաժան բաժան եղած Ռուսաստանը այլեւս ոչ մի դը-
րական դեր չունի կատարելու Մերձաւոր Արեւելքում,
թէ Հայաստանի բազմաթիւ տնօրինողների շարքից դուրս
է չպրտւած Ռուսաստանը, եթէ չասեմ առմիշտ, գէթ
շատ եւ շատ երկար ժամանակով:

Միւս կողմից մենք կարծես տակաւին պարզօրէն
չենք գիտակցում, որ երկրագնդի այն մասի վրա, ուր
գտնւում է Հայաստանը, Անգլիային է վիճակւած վըճ-
ռական խօսք ասել ի վերջոյ, եւ որ մեր քաղաքական
ապագան կախւած է աշխարհիս այդ հզօրագոյն պե-
տութիւնից։

Մեզ համար պարզ պիտի լինի բացարձակօրէն,
որ եթէ կայ այսօր մի մեծ պետութիւն, որը կամե-
նում է եւ շահ ունի ազատ ու անկախ հայկական
պետութիւն ստեղծել, Անգլիան է դա։

Ռուսաստանը միշտ ձգտել է կլանել Հայաստանը,
ձեռք բերել մեր երկիրը առանց հայերի։ Այդպէս է
եղել ցարական հզօր Ռուսաստանը, այդպէս է այսօր
եւ բօլշեւիկեան ուժասպառ Ռուսաստանը։

Ռուս բօլշեւիկները, իսկ նրանց յետեւից նաեւ
հայ ստրկահոգի բօլշեւիկները կամենում են Հայաս-
տանը ենթարկել նորէն Ռուսաստանի ազդեցութեան։
Այդ անելով՝ նրանք բնաւ չեն մտածում հայ ժողո-
վրդի բարօրութեան մասին, այլ ընդհակառակը,
նրանք դաշն են կապում հայ ժողովրդի երդւեալ
թշնամիներին՝ թուրք տաճիկներին հետ, որպէսզի հայ
ժողովրդի դիակի վրայով միանան թուրք ազգայնա-
կաներին հետ եւ նրանց միջոցով ամրապնդեն Ռու-
սաստանի դիրքը հանդէպ Անգլիային։

Ռուս բօլշեւիկները ձգտում են իրենց հայրենա-
դաւ հայ ընկերների միջոցով հայ ժողովրդի բազմի
հետ խաղալ այնպէս, ինչպէս սովոր էին խաղալ ռուս
ցարերը։ Փոխւել են ժամանակները, փոխւել են պայ-
մանները, փոխւել են նշանաբանները, հագուստները,
գոյները, բայց ռուսական հայաջինջ ոգին մնում է
անստատ։ Նրա մահահոտ շունչը նորէն զգացւում է
մեր հորիզոնների տակ այս ծանր օրերին։—

Եւ նրանք, որ ձգտում են դէպի կեանք, դէպի

ազաաութիւն, դէպի անկախութիւն, պիտի ըմբռնեն վերջապէս, որ բօլշեփկեան Ռուսաստանը կատարելապէս անգոր է տնօրինելու Հայաստանի բաղդը և որ մեր ճակատագիրը կապել, թէկուզ ժամանակաւորապէս, մահւան դատապարտւած նրա քաղաքական սիստեմի և իմպերիալիզմի հետ, նշանակում է քարտի վրա դնել մեր դատը, մեր ազգի ամբողջ ապագան...

ԲՕԼՇԵՒԻԿԵԱՆ ԱՒԱՆՏԻՒՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Չափազանց բնորոշ են բօլշեփկների համար այն խօսքերը, որ Մօսկւայի արտաքին գործոց կօմիսար Չիչերինը նորերս ուղղել էր Անգլիայի արտ. գոր. նախարարին իր վերջին նօտայի մէջ: «Մենք պատրաստ ենք յարգել Անգլիայի շահերը կովկասում», — ասում էր Չիչերինը: Ուրիշ խօսքով՝ բօլշեփկները, որոնք իրենց կօմսունիստներ, սօցիալիստներ են համարում և երեք տարի առաջ այնքան աղմուկ հանեցին, անվերապահօրէն ու կատալիօրէն պաշտպանելով ազգերի ինքնորոշման բացարձակ իրաւունքը և «առանց աննեկսիայի եւ կօնտրիբուցիայի» սկըքբունքը, այսօր պատրաստ են առևտուր անել անգլիացիների հետ ի հաճիւ կովկասեան ազգերի:

Սա մի աւելորդ ապացոյց է, թէ բօլշեփկի անւան տակ իրօք թագնւած է ռուսական իմպերիալիզմը, որ չարաշար պարտւելով անգլիական իմպերիալիզմից, աւելի ձեռնտու պայմաններով հաշտութիւն կնքելու համար վերջինիս հետ՝ կամենում է ծախել իր «պատմական» իրաւունքները ռուս ցարերի նւաճած ազգերի նկատմամբ, որոնք այնքան մեծ գոհաբերութիւններով հազիւ են կարողացել ազատւել ռուսական անարգ լուծից:

Բօլշեփկները պատրաստ են յարգել ոչ թէ ինք-

նորոշող ազգերի իրաւունքները կովկասում, այլ Անգլիայի շահերը կովկասում: Աւելի պերճախօս խոստովանութիւն չէր կարող լինել նրանց կողմից:

Սակայն, եթէ այսպէս թէ այնպէս կարելի է դեռ ըմբռնել ռուս բօլշևիկներին այս քաղաքականութիւնը մանր ազգերի հանդէպ, որ, ճիշտ է, ոչ մի առնչութիւն չունի սօցիալիզմի և սօցիալիստական սկզբունքների հետ, բայց թելադրւում է ռուսական հայրենասիրութիւնից, — ապա ի՞նչպէս բացատրել հայ բօլշևիկներին ազգակործան ընթացքը: Եւ իրաւ. մինչ ռուս բօլշևիկները պատրաստ են ծախելու ուրիշ ազգերի իրաւունքներն ու շահերը, հայ բօլշևիկները առեւտուր գիտեն անել միայն իրենց ազգի իրաւունքներով ու շահերով:

Որ հայ բօլշևիկները, փորձ անելով Հայաստանում հաստատելու իրենց իշխանութիւնը, վաճառել են իրօք հայ ժողովրդի շահերն ու իրաւունքները և այդպիսով, գիտակցաբար թէ անգիտակցաբար, վտանգել են ուղղում ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական ապագան, այլ և նրա ֆիզիկական սպագան, գոյութիւնը, — այդ արդէն կասկածից վեր է այսօր, երբ մեր ձեռքում բազմաթիւ ապացոյցներ կան: Հայ բօլշևիկները կրկնակի վաճառք են կատարել. նրանք ծախել են Հայաստանը մի կողմից ռուսներին, միւս կողմից՝ թուրքերին:

Մէկդի թողնելով հայ բօլշևիկներին յանցաւոր կապերը մեր ժողովրդի ազատ և անկախ քաղաքական գոյութեան թշնամի ներքին հակապետական տարրերի և մեր ժողովրդի ֆիզիկական գոյութեան սպառնացող համիսլամական արտաքին ոյժերի հետ, վերցնենք իրերի առարկայական դրութիւնը: Այս կերպ աւելի անաչառօրէն կարելի պիտի լինի պարզել հայ բօլշևիկներին կատարած ոճիրը:

Ով քիչ ծանօթ է բօլշևիկեան Ռուսաստանի քաղաքական հրաբլխային վիճակին, նրա տնտեսական անպատմելի քայքայման, նրա միջազգային աննախընթացօրէն խախուտ դիրքին, նա մի վայրկեան իսկ չի կարող իրեն թոյլ տալ սպասելու, որ այսօրւայ Ռուսաստանը ի վիճակի է ունէ քաղաքական, ռազմական կամ նոյնիսկ տնտեսական օգնութիւն հասցնել Հայաստանին: Ռուս բօլշևիկները, դուրկ չլինելով իրականութեան զգացումից, շատ լաւ են գիտակցում, որ իրենց ներկայ ոյժերով իրենց իշխանութիւնը երբէք չպիտի կարողանան տնտեսական հաստատել Անդրկովկասում և մասնաւորապէս Հայաստանում: Թէ Անդրկովկասը եւ թէ յատկապէս Հայաստանը նրանց համար այն չափով արժէք ունեն, որ չափով որ, այս երկրներում խլրտումներ եւ անկարգութիւններ յարուցանելով, նրանք կարող են անախորժութիւններ պատճառել Անգլիային և այդ միջոցով հարկադրել վերջինիս իրենց հետ աւելի նպաստաւոր հաշտութիւն կընքել: Իսկ թէ այդ խլրտումների և անկարգութիւնների հետեանքով այդ երկիրների ժողովուրդները կարող են մեծապէս տուժել և նոյնիսկ բնաջինջ լինել, այդ միանգամայն չի հետաքրքրում բօլշևիկների անւան տակ գործող ռուս իմպերիալիստ քաղաքագէտներին: Ռուս բօլշևիկները շատ լաւ գիտեն, որ իրենց դաւերն Անդրկովկասում և առհասարակ Մերձասոր Արևելքում էպիզոդներ են, անցողակն գէպքեր, պարզապէս քաղաքական աւանտիւրաներ, որոնց նպատակը միանգամայն օտար է և նոյնիսկ հակառակ անդրկովկասեան ազգերի շահերին: Բայց նրանք չեն հրաժարւում այդ աւանտիւրաներից, որովհետեւ այդ պահանջում է ռուս ազգի, ռուս պետութեան, ռուս իմպերիալիզմի շահը: Սակայն, եթէ ռուս ազգի և պետութեան շահերը ապահովւեն ուրիշ

ճանապարհներով, ուրիշ եղանակներով, այն ժամանակ ռուս բօլշևիկները պատրաստ կլինին յարգել Անգլիայի իրաւունքներն ու շահերը կովկասում եւ Հայաստանում:

Ի՞նչ է ուրեմն հայ բօլշևիկների արածը մեր երկրում. ոչ այլ ինչ, եթէ ոչ գործիք ծառայել ռուս բօլշևիկեան իմպերիալիստների ձեռքում հայ ժողովրդին միանգամայն օտար նպատակների համար: Այդ դաւածան դերը կատարելու համար հայ բօլշևիկները հարկաւ ստացել են ռուսներից առատ վարձատրութիւն:

Սակայն, եթէ հայ բօլշևիկների ընթացքը ռուսների հանդէպ կարող է դեռ որեւէ գաղափարական երևոյթ ունենալ, ապա այդ երևոյթից միանգամայն զուրկ է նրանց «քաղաքականութիւնը թիւրքերի հանդէպ»: Այդ «քաղաքականութիւնը» բառիս բուն իմաստով դաւածանութիւն է բացարձակապէս:

Ամբողջ աշխարհին յայտնի է այն յանցաւոր կապը, որ գոյութիւն ունէր որոշ ժամանակից ի վեր ռուս բօլշևիկների և օսմանեան ջարդարար փաշաների միջև: Նուրի և Խալիլ փաշաները չէին էլ թագցնում, որ նրանք բօլշևիկների հետ են: Նրանց յանդուգն դաւերը Դադստանում, Ադրբէջանում, Հարաբաղում, Զանգեզուրում, Նախիջևանում ոչ մի տարակոյս չէին կարող թողնել, թէ տաճիկ ջարդարարները զանազան քաղաքական խաղերի միջոցով ձգտում են իրականացրնել նոյն հայաջինջ ծրագիրը, որ նրանք Տաճկաստանում կատարելուց յետոյ հրամայական կարիք էին զգում աւարտել Ռուսահայաստանում:

Հայ ժողովրդի և քաղաքական եւ փիզիքական գոյութիւնն անհանդուրժելի է համաթրքական, համիսլամիստական իմպերիալիզմի տեսակէտով: Հայ ժողովրդի կատարեալ բնաջնջումը անհրաժեշտ է միանգամ ընդ միշտ վերացնելու համար այն վտանգը,

որ խանգարում է համաթրքական մեծ նպատակների իրագործման: Հայ ժողովուրդը պէտք է ամբողջովին զոհւի, որպէսզի թրքութիւնը ազատ շունչ քաշի, ապրի իր նախկին սանձարձակ և կուլտուրաւեր կեանքով:

Տաճկական այս ծրագիրը վիժեց՝ շնորհիւ Տաճկաստանի պարտութեան: Բայց տաճկական ղեկավար տարրերը բնաւ չհրաժարուեցին այդ ծրագրի իրագործումից:

Ստեղծւած քաղաքական նոր պայմաններում պէտք էր միայն պայքարի ձեւերը փոխել: Եւ երիտասարդ թիւրքերը, հայաջինջ ծրագրի հանձարեղ հեղինակները, փոխեցին Տաճկաստանում իրենց անունը և ծայր տւին ազգայնական մի «նոր» շարժման «Միլլի» անունով: Այդ պէտք էր դաշնակիցներին մոլորեցնելու համար:

Ռուսաստանի սահմաններում նրանց ագենտները դարձան բոլշևիկները, որպէսզի այդ եղանակով կարողանան հեշտութեամբ խաբել ռուսներին: Այդ էլ ռուսների ոյժից օգտւելու համար:

Ամիսներ շարունակ նրանք կռիւ մղեցին Ադրբէյջանում Մուսաւաթի դէմ, որ, իրենց կարծիքով, բաւականաչափ վճռական և կտրուկ չէր իր հայաջինջ քաղաքականութեան մէջ: Պէտք էր հայերին մի մահացու հարւած հասցնել նաև Անդրկովկասում, մինչդեռ Մուսաւաթը հրապարակ հանեց այդ գործում իր կատարեալ ապիկարութիւնը, անզօրութիւնը: Տաճկաստանն իր ներկայ օրհասական վիճակից կարելի է հանել հեշտութեամբ, եթէ վերանայ մէջտեղից անիծեալ Հայաստանը և հայկական հարցը, և Ադրբէյջանն անմիջապէս միտնայ թուրքիային: Օսմանեան ուժերն այն ժամանակ կկրկնապատկւեն, կեռապատկւեն, և նզովեալ Անտանաը, կատարւած իրողութեան առջև

դրւելով, կամայ թէ ակամայ ստիպւած պիտի լինի քաղաքականապէս նւիրագործել ստեղծւած փաստական դրութիւնը։ Ազատ և անկախ Ադրբէջան պէտք է չէ. նա պէտք է Տաճկաստանին այն չափով, որ չափով որ նրա օգնութեամբ Տաճկաստանը պիտի վերականգնւի և զօրանայ։ Ադրբէջանը պէտք է ծառայի Տաճկաստանի շահերին, դառնայ նրա գործիքը, այլապէս նրա գոյութիւնը որևէ իմաստ չունի։ Եթէ Ադրբէջանը՝ Տաճկաստանի քաղաքական բաղդի որոշման այս ճակատագրական վայրկեանին՝ չկարողացաւ որևէ իրական օգնութիւն ցոյց տալ վերահաս վտանգից իր մայր հայրենիքն ազատելու համար, այն ժամանակ աւելորդ է նոյնիսկ նրա գոյութիւնը։

Այս նկատումներից ելնելով, տաճկական փաշաներն իրենց ագենտների հետ միասին ամիսների անդուլ աշխատանքով կազմակերպեցին այն բօլշևիկեան — համիսլամական շարժումը, որը նախապատրաստեց նորերս Բագուում տեղի ունեցած «խորհրդային յեղաշրջումը»։

Անտարակուսելի է այժմ, որ այդ «յեղաշրջումը» ամիսներ առաջ մտածւած ու ծրագրւած մի «յեղաշրջում» էր։ Անտարակուսելի է նոյնպէս, որ այդ «յեղաշրջումը» կատարւել է թուրքական բոլոր կուսակցութեանց հաւանութեամբ և մասնակցութեամբ։

Բաւական է մատնանշել այստեղ միայն այն բնորոշ փաստը, որ Ադրբէջանի իշխող կուսակցութիւն Մուսաւաթը, չնայելով, որ հիւսիսից արշաւում էին բօլշևիկեան բանակները եւ սպառնում Ադրբէջանի անկախութեան, փոխանակ իր սյոժերը կենտրոնացընելու հիւսիսային ճակատում, իր բոլոր զօրքերը ուղարկեց դէպի Ղարաբաղ և Զանգեզուր։ Եւ որքան աւելի էր ուժեղանում բօլշևիկեան վտանգը, այնքան աւելի մեծ եռանդով ու անվերապահութեամբ մուսա-

ւաթական կառավարութիւնը յարձակողական նախապատրաստութիւններ էր տեսնում հայ ժողովրդի և Հայաստանի դէմ, Ղարաբաղի եւ Զանգեզուրի ճակատում:

Ադրբէջանի նոր, բօլշևիկեան կառավարութիւնը, որը ծնւեց ջարդարար Զիւանշիր խանի կարիքնետում, առանց որեւէ դիմադրութեան Մուսաւաթի կողմից, կոչւած էր միայն օգտւելու Մուսաւաթի նախապատրաստական աշխատանքներից եւ աւելի վճռական եղանակով իրագործելու այն, ինչ որ չէր յաջողւել Մուսաւաթին, — այսինքն իրագործել տաճկական ծրագիրը — կոտորել հայերին, և Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով միացնել Ադրբէջանը Տաճկաստանի հետ:

Որո՞նք էին այն նոր միջոցները, որոնցից զուրկ էր Մուսաւաթը և որոնց օգնութեամբ այսօր Ադրբէջանի «խորհրդային» նոր կառավարութիւնը յոյս ունէր իրագործելու տաճկական վաղեմի ծրագիրը հայ ժողովրդի գոյութեան դէմ: Այդ միջոցներն էին նախ այն ռազմական ուժերը, որոնք պիտի գային բօլշևիկեան Ռուսաստանից, համաձայն ռուս-տաճկական գաղտնի դաշնագրի, և երկրորդ՝ այն ներքին յեղաշրջումը, որ նրանք յոյս ունէին առաջ բերելու Հայաստանում իրենց կաշառած մարդկանց միջոցով:

Ռուս բօլշևիկեան ոյժերը չեկան Ադրբէջան ծառայելու տաճկական շահերին: Նրանք եկան այն չափով, որ չափով որ այդ պէտք էր Բագդից նախ յարտահանութիւնը դէպի Ռուսաստան ապահովելու համար: Աւելին թերեւ նրանք երբէք էլ լուրջ մտադրութիւն չեն ունեցել անելու: Խլրտումներ, անկարգութիւններ, բարդութիւններ առաջ բերել անդրկովկասեան պետութեանց մէջ — ի՞նչու չէ: Բայց ռազմական ոյժեր բերել, — ոչ: Իսկ խռատումներ տնչուչտ

առևս բօլշևիկները տւած էին տաճիկներին՝ վերջին-
ներիս իրենց կողմը գրաւելու և իրենց նպատակների
համար օգտագործելու դիտաւորութեամբ։ Սակայն
լեհական ճակատն ու բօլշևիկիան Ռուսաստանի ներ-
քին խախուտ վիճակը թոյլ չտւին, որ առևները
լայնօրէն կատարէին իրենց խոստումները, եթէ եր-
բէք նրանք լրջօրէն տրամադիր եղել են այդ անել։
Եւ այդպիսով կամայ թէ ակամայ խաբեցին տաճիկ-
թիւրքերին։

Յեղաշրջումը Հայաստանում պիտի կատարէին
հայ բօլշևիկները՝ համաձայն Ադրբէջանից եկած հը-
րահանգների։

Ի՞նչ տարրերի վրա կարող էին յենւել և պիտ
յենւէին այդ դաւաճանները։

Առաջին՝ այն մոլորւած ու այլասերւած երիտա-
սարդների վրա, որոնք թէև զուրկ չեն գաղափարա-
կանութիւնից, բայց հիւանդ են առևական ինտելի-
գենցիայի հիւանդութեամբ, հոգու հիւանդութեամբ։

Երկրորդ՝ ծագումով հայ, բայց ոգով առև տար-
րերի վրա, որոնց համար Հայաստանը և հայ ժողո-
վուրդը խորթ են, որոնք Հայաստանի վրա նայում
են, որպէս մի ժամանակաւոր, յաճախ ակամայ կա-
յանի վրա, կամ որպէս մի կթան կովի վրա, և ո-
րոնք, երբ կհանքը Ռուսաստանում խաղաղւի, առանց
անգամ նայելու պիտի փախչեն Ռուսաստան։ Դրանք
կամ անկախ Հայաստանի դէմ են, կամ լաւագոյն
դէպքում, անտարբեր են։ Դրանք առև իմպերիա-
լիզմի կամայ թէ ակամայ ագենտներն են։

Երրորդ՝ այն ոչ հայ տարրերի վրա, որոնք չեն
կարող կամ չեն կամենում հաշտւել Հայաստանի ան-
կախ գոյութեան հետ։ Ռուսները, որովհետև երէկ
տիրող էին, իսկ այսօր տանել չեն կարող իրենց ար-
դի հպատակ վիճակը։ Դրանք ատում են Հայաստա-

նը, դրանք ձգտում են դէպի հիւսիս: Թուրքերը, որովհետեւ նոյնպէս երէկւայ իշխողի հոգեբանութիւնն ունեն, հայի լուծը աւելի է նրանց համար ատելի, քան որեւէ այլ բան աշխարհում. դրանք ձգտում են դէպի Տաճկաստան. դրանք պատրաստ են ոչ միայն քաղաքականապէս վերացնել Հայաստանը, այլ եւ ֆիզիկապէս ոչնչացնել հայ ժողովուրդը:

Ահա այս տարերը շատ նպաստաւոր հող են ներկայացնում բօլշևիկ դաւաճանների համար, որոնք յոյս ունէին իրենց մութ նպատակների համար օգտուել նաեւ մեր ժողովրդի մէջ հացի պակասից և ֆինանսական ծանր կացութիւնից ծայր տւած դժգոհութիւնից:

Յեղաշրջման գործը Հայաստանում դիւրացնելու համար պէտք էր արտաքին ուժերի մի գրոհ: Բայց որովհետեւ ռուս բօլշևիկեան զօրքերը չէին կարող մօտենալ Հայաստանին, պէտք էր ազդել Հայաստանի իշխող կուսակցութեան վրա գէթ սպառնալիքներով, որպէսզի կարելի լինէր այդ կուսակցութեան շարքերում շփոթ ու խուճապ առաջացնել և այդ ճանապարհով ստիպել Հայաստանի կառավարութեանը, որպէսզի նա առանց դիմադրութեան զիջէ իր դիրքերը բօլշևիկ անւան տակ թագնւող դաւաճաններին: Այդ ըսպառնալիքի դերը կոչւած էին կատարելու այն երկու վերջնագրերը (ուլտիմատումները), որ իրար յետևից ներկայացրին Բագւի «նոր» տէրերը և բօլշևիկների կովկասեան ճակատի ներկայացուցիչները:

Ոչ Ադրբէյջանը կարող էր մեր դէմ մեծ զօրքեր ուղարկել, ոչ էլ ռուս բօլշևիկները: Ռազմական ոյժերի փոխյարաբերութիւնը Անդրկովկասում մնում էր նոյնը: Ուստի թէ թուրքական և թէ ռուսական ըսպառնալիքների յետևում չէր կարող լինել որ և է լուրջ, իրական վտանգ, որի վտխի տակ Հայաստանի

կառավարութիւնը հարկադրւած զգար իրան անձնա-
տուր լինելու :

Եւ եթէ Ադրբէջանի և ռուսների «սովետական»
սպառնալիքները չմոլորեցրին և խուճապի չմատնեցին
մեզ, սակայն նրանք եղան այն ազդանշանը, որից
սիրտ առան մեր ներքին դաւաճաններն իրենց ու
զործը սկսելու համար :

Եւ այսպէս բռնկւեց Բօլշևիկեան ապստամբու-
թիւնը Հայաստանում :

Եւ քանի որ այդ ապստամբութիւնն իրօք թե-
լադրւած էր դրսից և ղեկավարւում էր դրսից, նա-
պէտք է և ծառայէր դրսի նպատակների : Այդ նպա-
տակների մէջ ամենակարևոր տեղը բռնում է Տաճ-
կաստանին անմիջական օգնութիւն հասցնելու խըն-
դիրը : Մայիսի 10-ին դաշնակիցները պիտի ներկայա-
ցընէին տաճիկներին հաշտութեան դաշնագիրը, ըստ
որի Տաճկաստանը պիտի բաժան-բաժան լինէր : Տաճ-
կաստանից բաժանւող մասերից մէկն էլ Հայաստանն
է : Հայաստանում խլրտումներ առաջ բերելով և դաշ-
նակցական կառավարութիւնը տապալելով, կարելի
էր այնպիսի մահացու հարւած հասցնել այդ երկ-
րին, որ այլեւս նրա վերականգնման մասին խօսք
չլինէր :

Բօլշևիկեան յեղաշրջումը Հայաստանում պիտի
լինէր այն նոր, չափազանց էական փաստը, որ բոլո-
րովին պիտի խառնէր դաշնակիցների խաղաքարթերը
Մերձաւոր Արևելքում, և պիտի ստիպէր նրանց հիմ-
նովին վերաքննել Սան-Տէմօի մէջ մշակւած տաճկա-
կան դաշնագիրը ի նպաստ թիւրքիայի :

Բօլշևիկեան Հայաստանը հարկաւ չպիտի կարո-
ղանար պահպանել իր սահմանները : Ղարաբաղն ու
Ջանգեղուրը պիտի անցնէին առանց դժւարութեան
Ադրբէջանի թուրք «կարմիր» բանակի ձեռքը : «Կար-

միր» նախիջևանն ու Զանգիբասարը պիտի գրաւէին հեշտութեամբ Երևանը: «Կարմիր» Տաճկաստանն ու Ադրբէջանը պիտի միանային: Եւ չորս կողմից օղակաւ փոքրիկ, շատ փոքրիկ բօլշևիկեան Հայաստանը պիտի արիւնքամ լինէր ներքին քաղաքացիական կռիւց, որ պիտի լինէր անխուսափելի հետեանքը բօլշևիկեան յեղաշրջման:

Եւ մի գեղեցիկ օր, երբ այլեւս պէտք չէր լինի «Կարմիր» կօմիտայի, Ադրբէջանի և Տաճկաստանի արիւնարբու վարիչները գէն պիտի չպրտէին կարմիր դրօշակը ու կարմիր զարդարանքները՝ իրենց միւս գրպանից հանելու և նորէն բարձրացնելու համար համխալամական այն սրբազան կանաչ դրօշակը, որի վրա նրանք երգել էին միշտ և որին նրանք հաւատարիմ են եղել և «Կարմիր» դրօշակի օրով:

X

ԲՕԼՇԵՒԻԶՄԻ ՌԷԱԿՑԻՈՆ ԲՆՈՅԹԸ

Ամեն մի յեղաշրջման նշանակութիւնն ու էութիւնը կարելի է չափել այն ուէալ ուժերով, որոնց միջոցով կատարւում է յեղաշրջումը և որոնց վրա յենւում է կամ յենւելու է նրա իշխանութիւնը:

Անշուշտ ամեն մի յեղաշրջում ունի իր ներքին գաղափարական մղումներն ու տրամաբանութիւնը, իր ուրոյն ձևերն ու նշանակութիւնը, որոնք չեն կարող իրենց ինքնայատուկ դրոշմը չդնել իրերի ընթացքի վրա: Սակայն յեղաշրջման հետեանքների վրա ամենավճռական ազդեցութիւնն ունեն այն ուէալ ուժերը, որոնք կոչւած են իրագործելու յեղաշրջման նպատակները: Այդ ուժերից է ի վերջոյ կախւած յեղաշրջման բովանդակութիւնն և վախճանական ուղղութիւնը:

Այսպէս, օրինակ, Ռուսաստանի սովետական յեղաշրջման բօլշևիկ ղեկավարները հրապարակեցին սօցիալիստական նշանաբաններով և զուտ բանւորական քաղաքական նպատակներով. իրենց կատարած յեղաշրջման նրանք տւին իրենց կամեցած ձևը, բայց նրանց առաջնորդած յեղաշրջման բովանդակութիւնն ու վախճանական ընթացքը միանգամայն հակառակ դուրս եկաւ նրանց սկզբնական նպատակներին, որովհետեւ այն ուէալ ոյժերը, որոնց միջոցով նրանք հարկադրւած էին պաշտպանել իրենց իշխանութիւնն և իշխանութեան նոր ձեւերը, բաղկացած էին գերազանցապէս գիւղացիներից, իսկ գիւղացիները հարկաւ չէին կարող յենարան լինել զուտ բանւորական, պրօլետարական իշխանութեան համար, չէին կարող կոյր գործիք լինել զուտ պրօլետարական նպատակների համար:

Մի ուրիշ, մեզ համար աւելի հրահանգիչ օրինակ կարող է լինել սովետական յեղաշրջումը Բազում 1918 թ. մարտ ամսին:

Այն ժամանակ, ինչպէս կ'յիշէ ընթերցողը, ռուսական զօրքերի վերջին մնացորդներն էին փախչում Անդրկովկասից, տաճկական բանակն ու հորդանները արշաւում էին մեր սահմանների վրա, ամբողջ թըրքութիւնը կովկասում ոտքի էր կարգնել, և բովանդակ հայութեան Ֆիզիքական գոյութիւնը վտանգւած էր մահացու կերպով: Այդպիսի ողբերգական պայմաններում Բազւի մէջ փակւած հայ ռազմական ոյժերը՝ աւելի յաջող կերպով թիւրքի դէմ պաշտպանւելու համար՝ միացան ռուս բօլշևիկներին հետ, որովհետեւ այդ միջոցով էր միայն, որ հայութիւնը կարող էր կապ պահպանել ռուսական Հիւսիսի հետ եւ այնտեղից թերեւս ռազմական օգնութիւն ստանալ:

Հայկական զօրքերը, որոնք իրենց ճնշող մեծա-

մասնութ համար դաշնակցականներ էին, հարկաւ ոչ մի
գաղափարական հակում չունէին դէպի բօլշևիզմը։
Բայց նրանք առանց որեւէ դժւարութեան ենթարկւե-
ցին Բագւի սօվետական նոր իշխանութեան, հենց որ
Հ. Յ. Դաշնակցութեան Բագւի կենտրոնական կօմի-
տէն և Բագւի Հայոց Ազգային Խորհուրդը համապա-
տասխան հրահանգ տւին։ Ինչո՞ւ. որովհետեւ հայ ժո-
ղովրդական զանգւածների գիտակցութեան մէջ բօլ-
շևիկեան իշխանութիւնն այն ժամանակ Բագւում կոչ-
ւած էր կատարելու այն մեծ գործը, որ կատարում
էին թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը և թէ Հայոց Ազգա-
յին Խորհուրդը։ Այդ մեծ գործը կռիւն էր թրքական
վտանգի դէմ։

Բօլշևիկները, թէ ռուս, թէ հայ, միամտութիւն
ունեցան կարծելու, որ, եթէ հայկական զօրքերն այդ-
քան հեշտութեամբ ենթարկւեցին իրենց իշխանու-
թեան, դա նշանակում է, թէ նրանք բօլշևիկներ են
արդէն և թէ կարելի է նրանց միջոցով անել այն ա-
մենը, ինչ որ իրենց՝ բօլշևիկներին է հաճելի։ Հաս-
տատելով իրենց իշխանութիւնը գերազանցապէս Հ.
Յ. Դաշնակցութեան ռազմական ուժերի օգնութեամբ,
բօլշևիկները մանկամտօրէն երևակայեցին, թէ կարող
են նոյնիսկ Հ. Յ. Դաշնակցութեան հետ էլ վարւել
այնպէս, ինչպէս վարւել էին Մուսաւաթի հետ։ Նը-
րանք չքաշուեցին անգամ յայտարարելու իրենց պաշ-
տօնական օրգանի բերանով, թէ ջախջախւած է Մու-
սաւաթը, այժմ էլ հերթը հասել է Դաշնակցութեան։

Այս բոլորը հետեւանք է այն բանի, որ բօլշևիկ-
ներն աւելի մեծ կարևորութիւն են տալիս ձեւին,
քան բովանդակութեան, որ նրանք երբէք չեն թա-
փանցում իրերի և երևոյթների խորքը։ Այդ պատ-
ճառով 1918 թ. Բագւում նրանք չհասկացան, որ նը-
րանց «սօվետական» իշխանութիւնը գոյութիւն ունի

միմիայն Հ. Յ. Դաշնակցութեան բարի կամեցողութեամբ: Չկայ այդ կամեցողութիւնը, չկան և նրանք, բօլշեւիկները:

Եւ իրաւ. երբ պարզւեց, որ սօվետական Ռուսաստանը ի վիճակի չէ բաւականաչափ ռազմական օգնութիւն հասցնելու Բազւի տեղական ոյժերին՝ յետ մղելու համար թուրք տաճկական գրոհը, Հ. Յ. Դաշնակցութիւնն ամենայն դիւրութեամբ տապալեց բօլշեւիկների իշխանութիւնը Բազւում և զինաթափ արեց զուտ բօլշեւիկեան ոյժերը:

Եթէ մենք դառնանք այժմ Ադրբէյջանում նորերս տեղի ունեցած յեղաշրջման, կտեսնենք, որ այդ յեղաշրջումը ըստ էութեան շատ քիչ է տարբերում 1918 թ. մարտին կատարւած սօվետական յեղաշրջումից: Միայն դերերն են փոխւել: Այն ժամանակ հայերն էին, որ թուրքերի դէմ կռւելու համար դիմել էին ռուս բօլշեւիկի օգնութեան: Իսկ այս անգամ թուրքերն են, որ հայի դէմ կռւելու համար դիմել են ռուս բօլշեւիկի օգնութեան: Երկու դէպքումն էլ ռուս բօլշեւիկեան իշխանութիւնն այն չափով է ցանկալի եւ կայուն, որ չափով որ նա ծառայում է իր վրա դրւած պարտականութեան, իր առջեւ դրւած նպատակին:

Եւ ինչպէս որ 1918 թ. հայերը յուսախաբ եղան և քշեցին բօլշեւիկներին, այնպէս էլ այժմ թուրքերն անխուսափելիօրէն պիտի յուսախաբ լինեն «սօվետական» իշխանութիւնից եւ քշեն բօլշեւիկներին: Որովհետեւ թէ 1918 թ. թէ այս տարի ռէալ ոյժը Բազւում բօլշեւիկներին հարազատ ոյժ չէ: Որովհետեւ թէ 1918 թ. եւ թէ այս տարի բօլշեւիկները կոչւած են Բազւում իրենց համար միանգամայն օտար նպատակներ իրագործելու: Եւ հենց որ պարզւի, թէ բօլշեւիկեան այժմեան իշխանութիւնը Ադրբէյջանում ի վի-

ճակի չէ աւելի մեծ յաջողութեամբ կատարելու այն, ներկայ դէպքում, հակահայկական գործը, որի համար նա հաստատուած է, այդ իշխանութիւնը մի վայրկեան իսկ չպիտի կարողանայ այլեւս գոյութիւն ունենալ:

Սօվետական յեղաշրջումն Ադրբէջանում արդիւնք չէր այդ երկրի ուշաւ ուժերի փոխյարաբերութեան հիմնական փոփոխութեան, այլ միայն և միայն քաղաքական որոշ կօմբինացիաների: «Կարմիր» Ադրբէջանի ուշաւ ուժերի մտայնութիւնը, քաղաքական շահերն և սօցիալական մղումները մնացին նոյնը, ինչ որ էին «կանաչ» Ադրբէջանի մէջ:

«Կարմիր» դրօշակը Ադրբէջանին պէտք է ոչ թէ ներքին, այլ արտաքին գործածութեան համար. նա պէտք է դրսի աշխարհը մոլորեցնելու, խաբելու համար. նա պէտք է ոչ-խլամական ժողովրդների մտքի մէջ քաօս, խառնաշփոթութիւն յարուցելու համար: «Կարմիր» դրօշակը Ադրբէջանի համար մի հասարակ լաթ է, որ դէն պիտի շարտւի, հէնց որ նրա կարիքն այլևս չղգացւի, և նոյնքան դիւրութեամբ ու արագութեամբ, որքան նա բարձրացւեց այդ իսլամական երկրի վրա: Շուշում Ադրբէջանի նորընծայ բօլշևիկները կազմել են արդէն մի «յեղափոխական» կօմիտէ, որի նախագահն է ամբողջ Ղարաբաղին քաջ յայտնի դահճապետ Սուլթանօվը: Այդ կօմիտէն արդէն մի կոչ է հրատարակել՝ ուղղւած Ղարաբաղի հայ աշխատաւոր գիւղացիութեան: Սուլթանօվը «յեղափոխական» կօմիտէն առաջարկում է հայ գիւղացիներին՝ տապալել դաշնակցական կառավարութիւնը, հաստատել «սօվետական» իշխանութիւն և հաշտութիւն կնքել «կարմիր» թուրք աշխատաւորութեան հետ:

Մենք գիտենք արդէն, որ երբ «սօվետական» յեղաշրջում տեղի ունեցաւ Բաքում, Ադրբէջանի նոր կառավարութեան առաջին քայլն եղաւ՝ Հայաստանի

դէմ անմիջապէս պատերազմական գործողութիւններ սկսելու սպառնալիքով՝ պահանջել Ղարաբաղի և Զանգեզուրի յանձնումը Ադրբեջանին։ Մեզ ծանօթ է և մի ուրիշ սպառնալիք, որ եկաւ Հիւսիսից։

Ինչ էր այդ սպառնալիքների բուն նպատակը։ Ահաբեկում խառնաշփոթութիւն, խուճապ առաջացընել Հայաստանում եւ դիւրացնել այդպիսով մեր կառավարութեան տապալումը «ներքին» բօլշևիկների միջոցով։

Սակայն այժմ, երբ թէ «ներքին» և թէ «արտաքին» բօլշևիկների համար պարզեց, որ սպառնալիքը չի հասնում իր նպատակին, այլ ընդհակառակը, աւելի ևս սեղմում է Հայաստանի կառավարութեան հաւատարիմ շարքերը, նրանք կամենում են ուրիշ, աւելի «խաղաղ» ճանապարհով ազդել հայ ժողովրդի վրա։ Թէ Ադրբեջանը, թէ Հիւսիսը մեզ հետ հաշտութեան բանակցութիւնների մէջ են մտնում։ «Կարմիր» թուրքերը, ինչպէս, օրինակ, Շուշայ «կարմիր» կօմիտէն՝ Սուլթանօվի գլխաւորութեամբ, գառան մորթի հագած գայլերի նման հաշտութեան ձեռք են մեկնում Ղարաբաղի հայ գիւղացիներին, խնդրելով միայն մի փոքրիկ բան անել — տապալել անիծեալ դաշնակցականներին, որոնք իրենց հանգիստ չեն տալիս։

Բայց թող չմոլորւեն հայ ժողովրդի և Անկախ ու Միացեալ Հայաստանի արթուն հսկիչները։ Բօլշևիկ անւան տակ թաքնւած թուրքերը, ինչպէս նաև ոռոսները, ամենևին չփոխւեցին մի երկու շաբաթւոյ ընթացքում։ Ինչպէս այն ժամանակ, երբ նրանք մեզ սպառնում էին՝ պատերազմով, այնպէս էլ այժմ, երբ նրանք «հաշտութեան» ձեռք են մեկնում մեզ, նրանք երդւեալ թշնամիներն են Անկախ Հայաստանի և հայ աշխատաւոր ժողովրդի։

Պատերազմի սպառնալիքները, ինչպէս եւ հաշ-

տութեան բանակցութիւնները տարբեր ձևեր, միջոց-
ներ են միայն նոյն հայաջինջ նպատակին հասնելու
համար: Թշնամին ձգտում է, ինչ գնով էլ լինի, ինչ
միջոցով էլ լինի, կործանել Անկախ եւ Միացեալ
Հայաստանը, բնաջինջ անել հայ դեմօկրատիան, որով-
հետեւ վերջինս կանգնած է թէ ուստի բօլշևիկի, թէ
թուրք «բօլշևիկի» — ճանապարհի վրա:

Թող ոչ ոք միամիտ հաւատը չունենայ, որ ան-
գամ կնքւած հաշտութիւնը բօլշևիկ կոչւած թշնամու
հետ պիտի իրօք բերի մեր երկրին խաղաղութիւն:
Ընդհակառակը, երբ բօլշևիկներ չկային Բագում, Արդրկովկասում կար միայն մի պատերազմ — հայ-
թուրքական: Բայց բաւական էր, որ նրանց դրօշակը
ծածանէր Ադրբէջանում, եւ մենք ունեցանք մի նոր
պատերազմ եւս թուրք — վրացական: Եւ կարելի է ա-
ռանց վերապահութեան պնդել, որ, եթէ բօլշևիկները
որեւէ յաջողութիւն ունենան Հայաստանում կամ վը-
րաստանում, մենք պիտի ունենանք Անդրկովկասում
եւ մի երրորդ պատերազմ — հայ-վրացական: Վերջա-
պէս, բօլշևիկները չէին լինի բօլշևիկ, եթէ այդ բո-
լոր ճակատների վրա չաւելցնէին նաեւ ներքին ճա-
կատներ մեր դժբախտ ժողովուրդների ծոցում: Չէ՞ որ
նրանց նշանաբանն է — քաղաքացիական պատերազմը,
այսինքն ներքին եղբայրասպան պատերազմը:

Արիւն, անվերջ արիւն, ծով արիւն պիտի հոսի
Անդրկովկասում, որպէսզի յագենայ Ռուսաստանը,
որպէսզի յագենայ Տաճկաստանը: Որովհետեւ միայն
փոքր ազգերի անկախութեան ոտնահարման եւ փոքր
ազգերի ֆիզիքական բնաջնջման միջոցով է, որ թէ
Ռուսաստանը եւ թէ Տաճկաստանը տպահովւած պիտի
տեսնեն իրենց շահերը Մերձաւոր Արեւելքում:

Թէ ո՞ր աստիճան զգաստ, զգուշաւոր, արթուն
եւ միաժամանակ վճռական պիտի լինի մեր վերաբեր-

մուշքը դէպի բօլշևիկները, այդ պարզ պիտի լինի ամենքի համար, եթէ մատնանշենք այստեղ այն երկդիմի ընթացքը, որ բռնել է սօվետական Ռուսաստանը հանդէպ վրաստանի: Յայտնի է, որ սօվետական Ռուսիան հաշտութիւն է կնքել վրաստանի հետ և ճանաչել է վերջինիս անկախութիւնը: Սակայն միաժամանակ նոյն սօվետական Ռուսիան «սօվետական» Ադրբէյջանի միջոցով պատերազմ է մղում նոյն վրաստանի դէմ:

Բայց մի՞թէ նոյնը չի անում սօվետական Ռուսաստանը նաև Հայաստանի վերաբերմամբ: Նա մեզ առաջարկում է սկսել իր հետ հաշտութեան բանակցութիւններ, նա նախօրոք ճանաչում է մեր անկախութիւնը, սակայն միևնոյն ժամանակ իրեն յատուկ նենգամտութեամբ շարունակում է, իր վարձկան գործակալների միջոցով, խլրտումներ առաջ բերել, ապրստամբութիւն կազմակերպել մեր երկրի մէջ՝ օդը ցընդեցնելու համար Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստանի շէնքը: Կարելի՞ է միթէ հաւատալ, որ մեր պետութեան մէջ և մեր պետութեան դէմ վերջին շարժանքի ընթացքում նիւթւող դաւերը կատարւում են միայն տեղական, անդրկովկասեան բօլշևիկների նախաձեռնութեամբ և որ այդ բոլորի մէջ ռուսական կենտրոնը որևէ մասնակցութիւն չունի:

Հայաստանը, որ բոլոր երկիրների մէջ ամենից աւելի կարօտ է խաղաղութեան և շինարար աշխատանքի, չի կարող ունէլ յոյս դնել բօլշևիզմի վրա, որովհետև բօլշևիզմը գերեզման է հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան և նրա քաղաքական անկախութեան համար:

Եթէ որևէ ուրիշ երկրի վերաբերմամբ խօսք կարող է լինել բօլշևիզմի յեղափոխական բնոյթի և դերի մասին, — մի բան, որ միանգամայն ես ժխտում եմ, մեզ մօտ յամենայն դէպս բօլշևիզմը բացարձա-

կապէս մի հակայեղափոխական, հակապետական և յետադարձ, ունակցիօն շարժում է։ Որովհետև որևէ քաղաքական հոսանքի կամ շարժման յեղափոխականութիւնը չափւում է ոչ թէ նրա յեղափոխական ֆրոնտներով ու աղաղակներով, այլ նրա յեղափոխական գործերով կամ, աւելի ճիշտը, նրա կատարած գործերի յեղափոխական արդիւնքներով։ Մինչդեռ, ինչպէս մենք տեսանք, բօլշևիզմը ամենուրեք իր հետ և իր յետևից բերում է ամենասև ունակցիա թէ քաղաքական, թէ սօցիալական և թէ տնտեսական ասպարէզում։ Իսկ Հայաստանում բօլշևիզմը ունակցիօն շարժում է կրկնակի տեսակէտով, որովհետև մեր սահմանների մէջ նա յենւում է նաև բացայայտօրէն ունակցիօն տարրերի վրա։ Մենք գիտենք արդէն, որ բօլշևիկների յինարանը եղել են դենիկինեան «պաներն ու զինւորները, նախկին ռուս զինւորները, ռուս աղանդաւորները, որոնք երազում են ցարական Ռուսաստանի վերականգնման մասին, և վերջապէս, թրքութիւնը, որի իդէալն է համիսլամական մեծ կայսրութիւնը։

Բօլշևիզմի և համիսլամութեան դաշնը մի պատահական, բռնազբօսիկ բան չէ, ինչպէս կարծում են շատերը։ Դա մի բնական եղբայրակցութիւն է աշխարհիս ամենաունակցիօն երկու ոյժերի՝ ռուսութեան և թրքութեան։ Մօնօլական ոգին եւ մօնօլական արիւնն է, որ այստեղ միացրել է երկու արիւնակից մօնօլական ցեղերը՝ ռուս և թուրք ցեղերը մի ընդհանուր ասիական պայքարի մէջ ընդդէմ առաջաւոր Եւրօպայի, ընդդէմ համաշխարհային կուլտուրայի։

Կուեւ բօլշևիզմի դէմ նշանակում է կուեւ խաւարի և ստրկութեան դէմ...



Մօտ օրէն հրապարակ
կ'ելլէ տաղանդաւոր գրագէտ
Գրիգոր Զօհրապի
Եւրոպա կատարած
նամբորդութեան տպաւորու-
թիւնները հեղինակին
ամենավերջին լուսանկարով

“ՍԵՒԱՆ”, ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԳՈՐԾԵՐԸ


- 1.— Ամուսնութեան խնդրանք (Զաւեց) դր. հեղ. Հանրի Պորսո քարգ. Ժան Նօէլ 10
- 2.— Ժիւլ Բայեօի Խորհուրդները կրթական մշակներուն, հայացուց Ա. Պալեան 40
- 3.— Բօլշեւիզմը եւ Հայաստան Ռ. Դարբինեան 25


ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

- 1.— Ուղեւորի Նօթեր, Գ. Զօհրապ
- 2.— Անձկութեան Ժամեր (վիպակ) Զապէլ Եսայեան
- 3.— Օսար վայրերում (Պօլիս, Իզմիր, Եգիպտոս) Ա. Շիրվանզադէ
- 4.— Արուեստի երգեր (ֆերթուածներ) Անտոն Կազել
- 5.— Ծանօթ դէմքեր, Գ. Զօհրապ

Գին 25 Ղր.

Ամերիկայի համար 25 Սէնթ






ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0191224

In



A $\frac{\pi}{81178}$